ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 15 (1415) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 02, 2009
VOLUME 29, NO. 15 (1415) SATURDAY, MAY 02, 2009

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 94-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ ՅԱՌԱՋԱՑՈՒՑ ՄԵԾ ԸՆԴՎԶՈՒՄ

# ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՈԳԵԿՈՉԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

### ՆԱԽԱԳԱՀ ՕՊԱՄԱ ՉՕԳՏԱԳՈՐԾԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՌԸ



*Ընդդիմադրութեան ղեկավարները Ծիծեռնակաբերդի յաւերժական կրակի մօտ*

*Այն պահուն երբ համայն հայութիւնը կը պատրաստուէր նշելու Հայոց Ցեղասպանութեան 94-րդ տարելիցը եւ անհամբեր կը սպասէր Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի յայտարարութեան, Հայաստանի իշխանութիւնները եկան մեծ հարուած հասցնելու հայ ժողովուրդի ազգային շահերուն:*

*Արդարեւ՝ Ապրիլ 22-ին յայտարարուեցաւ թէ, Հայաստան եւ Թուրքիա համաձայնութեան հանգած են իրենց «երկկողմ յարաբերութիւններու կարգաւորման համապարփակ շրջանակի շուրջ՝ երկու կողմերուն գոհացնող կերպով»: Այս կապակցութեամբ յայտարարութիւնը տարածեցին միատեղ՝ Հայաստանի, Թուրքիոյ եւ Զուիցերիոյ արտաքին գործերու նախարարութիւնները:*

*Յայտարարութիւնը կը շեշտէր է, որ Հայաստան եւ Թուրքիա, Զուիցերիոյ միջնորդութեամբ, մեծ աշխատանք կատարած են, նպատակ ունենալով կարգաւորել իրենց երկկողմ յարաբերութիւնները:*

*«Այդ գործընթացում երկու կողմերը ձեռք են բերել շօշափելի առաջընթաց եւ փոխըմբռնում: Նրանք համաձայնութեան են հանգել իրենց երկկողմ յարաբերութիւնների կարգաւորման համապարփակ շրջանակի շուրջ երկու կողմերին գոհացնող կերպով: Այս համատեքստում սահմանուել է ճանապարհային քարտէզ», - ըսուած է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան տարածած յայտարարութեան հայերէն բնագիրին մէջ:*

*Հայ-Թրքական այս համաձայնութիւնը, իր ժամկէտով եւ անորոշ բովանդակութեամբ, եկաւ խոր ընդվզում յառաջացնելու ե՛ւ Հայաստանի, ե՛ւ սփիւռքի տարածքին: Բազմաթիւ կուսակցութիւն-*

*Շար.ը էջ 4*

## ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱ ՕԳՏԱԳՈՐԾԵՑ «ՄԵԾ ԵՂԵՌՆ» ԲԱՌԵՐԸ

*Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա Ապրիլ 24-ի իր յայտարարութեան մէջ չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառը, ինչպէս որ կ՚ակնկալուէր իրմէ: Սակայն փոխարէնը Օպամա հայութեան հետ կատարուածը հայերէնով որակեց «Մեծ Եղեռն»:*

*Պարաք Օպամա ընդգծեց, որ մէկուկէս միլիոն հայերու կոտորածը «20-րդ դարու մեծ նախճիրներէն մէկն է»:*

*Շար.ը էջ 4*

## ՄՐՑԱԿԻՑ ՉՈՒՆԵՆԱԼՈՎ ԵՐԵՔ ՀԱՅ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ՀՌՉԱԿՈՒԵՑԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ

## ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ

*Յունիս 7-ին կայանալիք Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն, թեկնածութիւնները ետ քաշելու պայմանաժամը աւարտեցաւ Ապրիլ 22-ի կէս գիշերին, որմէ անմիջապէս ետք Ներքին գործոց նախարար Զիատ Պարուտ յայտարարեց, որ երեք թեկնածուներ՝ Սեպուհ Գալփաքեան, Արթուր Նազարեան եւ Յակոբ Բագրատունի յաղթական կը նկատուին, մրցակից չունենալու պատճառաւ:*

*Լիբանանի մէջ տիրող համայնքային դրութեան հետեւանքով, մայրաքաղաք Պէյրութի երկրորդ ընտրաշրջանին մէջ, Հայ Առաքելական համայնքին յատկացուած երկու աթոռներուն համար Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացուցած էր Ընկ. Սեպուհ Գալփաքեանի եւ Հ.Յ. Դաշնակցութիւնը Արթուր Նազարեանի թեկնածութիւնը: Պայմանաժամէն*



*Լիբանանի խորհրդարանի նորընտիր անդամ՝ Ընկ. Սեպուհ Գալփաքեան*

*առաջ չորս այլ հայեր ետ վերցուցած ըլլալով իրենց թեկնածու-*

*Շար.ը էջ 4*

## ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ ՉՎԱՅԵԼՈՂ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ Ի ՎԻՃԱԿԻ ՉԷ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱԶԳԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՇԱՀԵՐԸ

### ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*Հայկական Ցեղասպանութեան տարելիցի նախօրէին Հայաստանի իշխանութիւնները մատուցեցին հերթական անակնկալը: Ապրիլ 22-ին Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարները համատեղ յայտարարութեամբ մը եկան տեղեկացնելու թէ, երկու երկիրները համաձայնութեան հանգած են իրենց միջեւ յարաբերութիւններու կարգաւորման համապարփակ շրջանակի շուրջ եւ ընդունած են »ճանապարհային քարտէզ«:*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը խիստ մտահոգիչ ու դատապարտելի կը գտնէ սոյն յայտարարութիւնը, ուր կը բացակային յստակ կէտեր՝ գոյացած համաձայնութեան շուրջ:*

*Մեզի համար հասկանալի ըլլալով հանդերձ Հայաստանի իշխանութիւններու ձգտումը՝ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բարելաւման հարցով, մենք ունինք խոր կասկածներ խնդիրի լուծման ժամանակի, ձեւաչափի եւ կերպի ընտրութեան վերաբերեալ: Թուրքիան տակաւին չէ վերացուցած Հայաստանի միակողմանի շրջափակումը, չէ ընդունած Ցեղասպանութեան իրողութիւնը ու առ այսօր չէ դադրեցուցած հակահայ թշնամական գործողութիւնները:*

*Պատմաբաններու յանձնաժողով ստեղծելու շուրջ կատարուած յայտարարութեամբ սկսած հայկական դիւանագիտութիւնը, անցնող ամիսներուն կրեց բազմաթիւ պարտութիւններ ու ամէն քայլափոխի մատնուեցաւ ձախողութեան՝ թրքական ու ատրպէյճանական փոխհամաձայնեցուած քայլերուն դիմաց:*

*Անգամ մը եւս կու գանք կրկնելու թէ, ժողովուրդի վստահութիւնը չվայելող իշխանութիւնը ի վիճակի չէ պաշտպանելու ազգի գերագոյն շահերը ու ենթակայ է տեղի տալու արտաքին ճնշումներու առջեւ: Բազմաթիւ երկիրներու ու կառոյցներու կողմէ Հայաստանի վրայ բանեցուող ճնշումներու կողքին, վերջին շրջանին արդէն իսկ զգալի է թրքական ազդեցութեան զօրացումը տարածաշրջանէն ներս, բան մը որ մեզի համար կը նկատուի ամէնէն վտանգաւորը:*

*Մեր խորին համոզմամբ, գործընթացի նմանօրինակ շարունակութիւնը կրնայ առաջին հերթին հիասթափութիւն յառաջացնել սփիւռքահայութեան մօտ: Հայ-թրքական յարաբերութիւնները չեն կրնար քննարկուիլ ազգային ընդհանուր քաղաքականութեան շրջանակներէն դուրս ու հետեւաբար թշնամիի հետ բանակցութիւնները պէտք է կատարուին բաց ու թափանցիկ, առիթ տալով համազգային քննարկումներու, ինչպէս Հայաստանի, նոյնպէս ալ սփիւռքի տարածքին:*

*Այս առթիւ, կոչ կ՚ընենք Հայաստանի ու սփիւռքի մեր ժողովուրդին, որպէսզի իրենց ձայնը լսելի դարձնեն ու առանց վարանելու դատապարտեն այսօրուայ իշխանութիւններու նմանօրինակ ազգավնաս քայլերը:*

*Ապրիլ 23, 2009*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԴԱՇՆԱԿ ԶԱՐԿԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿ

*Մի քանի օր առաջ, երբ դեռ Դաշնակցութիւնը քննադատում էր հայ-Թուրքական յարաբերութեան հարցում Հայաստանի կեցուածքը, բայց չէր յայտարարել կոալիցիայից դուրս գալու մտադրութեան մասին, մի յօդուած գրեցի, որ սկսում էի Ազգային գրադարանի հետ կապուած մի պատմութեամբ, որ պատմել էին ինձ մի ապաքաղաքական առիթով: Այդ պատմութիւնը կապուած է գորբաչովեան վերակառուցման շրջանի հետ, երբ բացւում էր ամէն ինչ կամ գրեթէ ամէն ինչ, ու այդ թւում նաեւ Ազգային գրադարանի այն գրքերը, որոնք մինչ այդ փակի տակ էին: Եւ այդ ժամանակի լրագրողներից մէկին այդ ժամանակի խմբագիրներից մէկը յանձնարարում է գնալ եւ տեսնել, թէ ինչ գրքեր են մինչեւ «պերեստրոյկան» եղել փակի տակ մեր Ազգային գրադարանում: Լրագրողը գնում է, բերում է գրքերի ցանկը, որոնց մէջ ամենից ուշագրաւներից է լինում նաեւ Սփիւռքի գաղթօջախներում գրուած մի գրքոյկ՝ «Դաշնակ զարկելու ձեռնարկ» վերնագրով:*

*Պատմութեան ինտրիգն այն է, որ խօսքը ոչ թէ դաշնակ, այսինքն դաշնակցական զարկելու, այսինքն խփելու մասին է, այլ դաշնամուր նուագելու: Բանն այն է, որ սփիւռքի լեզուն դաշնամուրին ասում է դաշնակ, իսկ զարկելը այդ լեզուով ունի նաեւ նուագելու իմաստ, առաւել եւս, որ դաշնամուրը մի քիչ զարկելով են նուագում՝ մատներով ստեղնաշարին: Դա պատմութեան ինտրիգն էր, իսկ պատմութիւնը յիշելու իմաստն այն էր, որ Դաշնակցութիւնը Հայաստանում կարծես թէ հենց «դաշնակ զարկելով», այսինքն դաշնամուր նուագելով, ոչ թէ քաղաքականութեամբ էր զբաղուած, քանի որ այլ կերպ դժուար է անուանել այն վիճակը, երբ իշխանութեանը քննադատում ես մի շատ կարեւոր, սկզբունքային, գաղափարական, ճակատագրական համարուող հարցում սխալի համար, բայց շարունակում ես այդ իշխանութեան հետ կոալիցիայում մնալ եւ ամէն անգամ քննադատելուց յետոյ ինչ որ արդարացում հնարելով կոալիցիայից դուրս չգալու համար:*

*Սակայն թւում է, թէ այս անգամ Դաշնակցութիւնը դադարեցնում է "դաշնակ զարկելը", այսինքն դաշնամուր նուագելը, եւ դուրս է գալիս կոալիցիայից: Սակայն երեւի թէ դեռ վաղ է շտապել եւ եզրակացութիւն անել նուագը դադարեցնելու մասին: Կոալիցիայից դուրս գալը դեռ ոչինչ չի նշանակում, կամ շատ քիչ բան է նշանակում: Շատ կարեւոր է, շատ աւելի կարեւոր է այն, թէ ինչպէս է իրեն պահելու Դաշնակցութիւնը կոալիցիայից դուրս գալուց յետոյ: Խօսքն այն մասին չէ, թէ արդեօք Դաշնակցութիւնը յեղափոխութիւն անելու է, կամ արդեօք յայտարարելու է Հայ Ազգային կոնգրեսին միանալու մասին: Պարզապէս էական է, թէ ինչպէս է ՀՅԴ-ն իրեն պահելու ներքին խնդիրների կապակցութեամբ, ինչ դիրքորոշում է ունենալու քաղաքապետի ընտրութիւնից յետոյ, ում հետ է աւելի շատ գործակցելու թէ խորհրդարանում, թէ Երեւանի աւագանում՝ իշխանութեան, թէ ընդդիմութեան, արդեօք ինչպէս է վերաբերելու երկրում մարդու իրաւունքների եւ ազատութիւնների ոտնահարման դէպքերին, քաղբանտարկեալների առկայութեան խնդրին, տնտեսական քաղաքականութեանը: Այլ կերպ ասած, Դաշնակցութիւնը պէտք է ներքին կեանքի խնդիրների կապակցութեամբ իր դիրքորոշումով ցոյց տա, թէ արդեօք արժանի է քաղաքական դաշտում լինելուն, թէ ընդամէնը պիտանի է Հանրային խորհրդում տեղ ունենալուն, ինչպէս երբեմնի «ազգընտիր» գործիչներն ու նրանց կուսակցութիւնները:*

*Միայն դրանից յետոյ հնարաւոր կը լինի ասել՝ դադարեցրել է արդեօք Դաշնակցութիւնը «դաշնակ զարկել», թէ պարզապէս հեռացել է եւ սպասում է, որ իշխանութիւնը գոչի՝ «բրաւօ», բիս»:*

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*
*«ԼՐԱԳԻՐ»*

# «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԷԶ». ՖՈՐՍՄԱԺՈՐ

*Հայաստանի - Թուրքիայի արտգործնախարարութիւնների յայտարարութիւնը, երկկողմ յարաբերութիւնների կարգաւորման եւ դրանք փոխադարձ յարգանքի ու բարիդրացիութեան ոգով զարգացնելու վերաբերեալ, տակնուվրայ է արել ողջ քաղաքական դաշտը:*

*Բնականաբար, հեշտ է Ապրիլի 24-ի նախօրէին կատարուած յայտարարութիւնը վերագրել ԱՄՆ նախագահին «բարի կամքի» ժեստ անելուն, որպէսզի նրան ազատենք ցեղասպանութիւն բառն օգտագործելու ծանր պարտականութիւնից: Սակայն երեւոյթի արմատներն աւելի խորքային եւ սկզբունքային են:*

*Իրողութիւնն իր ողջ մերկութեամբ այն է, որ այժմ ունենք եռակողմ ստորագրուած մի փաստաթուղթ, որտեղ նշւում է «ճանապարհային քարտէզի» սահմանման մասին. մի տերմին, որ ՀՀ ԱԳՆ-ն ներկայացնում է ուղղակի որպէս «դիւանագիտական բառապաշարում ընդունուած եւ օգտագործուող հասկացութիւն, որը նշանակում է ձեռնարկուելիք քայլերի ծրագիր»:*

*Սակայն առաւել հետաքրքրականն այս փաստաթղթի վերաբերեալ միջազգային հանրութեան գնահատականներն են: Մասնաւորապէս ԱՄՆ-ը, ողջունելով երկկողմ յարաբերութիւնների կարգաւորման վերաբերեալ Հայաստանի եւ Թուրքիայի յայտարարութիւնը, նշում է, որ «կարգաւորումը պէտք է տեղի ունենայ առանց նախապայմանների եւ ողջամիտ ժամանակում»: Իսկ ահա Ադրբեջանի ԱԳՆ-ն, իր մամլոյ խօսնակի շուրթերով, մի այլ, տրամագծօրէն հակառակ «ուղերձ» է անում՝ յայտարարելով, թէ. «Թուրք-հայկական յարաբերութիւնների նորմալացումը եւ երկու երկրների միջեւ սահմանների բացումը պէտք է ընթանայ միայն Ադրբեջանի «գրաւեալ» տարածքներից հայկական զօրքերի դուրսբերմանը զուգահեռ»:*

*Սա միայն մի բան կարող է նշանակել, որ որքան էլ յայտարարութիւնը ստորագրող կողմերը՝ Հայաստան, Թուրքիա, Շուէյցարիա, ցանկանան «ճանապարհային քարտէզի» տակ ներկայացնել «դիւանագիտական բառապաշարում ընդունուած եւ օգտագործուող հասկացութիւն», միեւնոյն է, կոնկրետ տարածքային նախապայմաններ նշմարւում են: Միաժամանակ տարօրինակ է, որ այսքան լարուած իրավիճակում՝ նրբագոյն դիւանագիտական հնարքների եւ տերմինների շարքում ընտրուել է հենց «ճանապարհային քարտէզ» տերմինը, երբ գոյութիւն ունեն ուղղակի դիւանագիտական բանակցութիւնները բնորոշող տասնեակ ընդունուած ու հասկանալի այլ տերմիններ, որ տարակարծութիւնների տեղիք չէին տա: Խօսքերս հաստատելու համար յիշեցնեմ, որ միայն Նախկին Հարաւսլաւիան մասնատելու գործընթացում չորս «ճանապարհային քարտէզ» է իրականացուել, իսրայէլա-պաղեստինեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի հիմքում նոյն «ճանապարհային քարտէզի» գաղափարն է. մեկնաբանութիւններն անտեղի են:*

*Եթէ հայկական դիւանագիտութեանը չյաջողուի, ամենակարճ ժամանակահատուածում, կոնկրետ Թուրքական կողմի բերանով յայտարարել, որ երկկողմ հաշտեցու-*

*Շար.ը էջ 4*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

# ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՍՈՒՏ ՔԱՐՏԷԶ

*Ինչպէս եւ սպասւում էր, Թուրքական կողմը «արտահոսք» թողեց նախորդ օրը Շուէյցարիայի միջնորդութեամբ ստորագրած հայ-Թուրքական համատեղ յայտարարութեան «ճանապարհային քարտէզի» վերաբերեալ: Այդ «արտահոսքը», ամենայն հաւանականութեամբ, պարզ ապատեղեկատուութիւն է: Յամենայնդէպս, ԱԳՆ խօսնակ Տիգրան Բալայեանը, ի պատասխան մեր հարցի, խորհուրդ տուեց նման լուրջ հարցերում հիմնուել միայն պաշտօնական տեղեկատուութեան վրայ: Բայց «ճանապարհային քարտէզի» ներկայացուած, ենթադրաբար, կեղծ տարբերակը, միեւնոյն է, հետաքրքիր է՝ իմանալու համար դիմացինի ցանկութիւններն ու ձգտումները: Եւ այսպէս, ըստ «Ազատութիւն» ռ/կ-ի« Թուրքական «Սաբահ» թերթը յայտնում է, որ «ճանապարհային քարտէզը» բաղկացած է 5 կէտից. 1/ հայկական կողմը ճանաչում է Կարսի պայմանագիրը, 2/ Ցեղասպանութեան խնդիրը քննարկելու համար ստեղծւում է պատմաբանների յանձնաժողով, 3/ բացւում է հայ-Թուրքական սահմանը եւ ստորագրւում է առեւտրի մասին պայմանագիր, 4/ Անկարան եւ Երեւանը Վրաստանում հաւատարմագրում են իրենց դեսպաններին, որից յետոյ հաստատում են անմիջական դիւանագիտական յարաբերութիւններ, 5/ «ճանապարհային քարտէզի» այն խնդիրները, որոնք կարիք ունեն օրէնսդրական հաստատման, կը քննարկուեն Թուրքիայի խորհրդարանում: Ի դէպ, «Սաբահը» գտնում է, որ Կարսի պայմանագիրը կնքուել է Թուրքիայի եւ Խորհրդային Միութեան միջեւ, ինչը, մեղմ ասած, ճշգրիտ տեղեկատուութիւն չէ. ԽՍՀՄ-ը, ինչպէս յայտնի է, ձեւաւորուել է 1922-ի դեկտեմբերի 30-ին, իսկ յիշեալ պայմանագիրը ստորագրուել է 1921-ի հոկտեմբերի 13-ին, եւ ստորագրող կողմերից մէկը միջազգային իրաւունքի սուբիեկտ չհանդիսացող «Հայկական ԽՍՀ-ն» էր: Այդ իսկ պատճառով այսօր, եթէ Հայաստանի Հանրապետութիւնն իսկապէս ճանաչի Կարսի պայմանագիրը, հետագայում դա կարող է նոր խնդիրներ առաջացնել: Իսկ թէ որքանով էր այդ փաստաթուղթը (եւ դրան նախորդող Մոսկովեան պայմանագիրը) մեզ համար անբարենպաստ՝ այդ մասին գիտի ցանկացած դպրոցական: Հետեւաբար, եթէ մենք այսօր յայտարարէինք, որ ճանաչում ենք սոյն պայմանագրի դրոյթները, դա չպատճառաբանուած զիջում կը լինէր, եւ յուսանք, որ Հայաստանի ո՛չ մի կառավարութիւն նման քայլի չի գնա:*

*Նոյնը, որոշ վերապահումներով, կարելի է ասել նաեւ «պատմաբանների յանձնաժողովի» մասին: Վերապահումները կապուած են այն հարցի հետ, թէ ինչ լիազօրութիւններով են օժտուած լինելու այդ պատմաբանները, եւ որն է լինելու նրանց քննարկման բուն առարկան:*

*Հիմա մենք չէինք քննարկի «ճանապարհային քարտէզի» ենթադրական կէտերը, եթէ այդ փաստաթուղթը պաշտօնապէս հրապարակուէր: Որքան շուտ դա լինի՝ այնքան լաւ: Թե չէ՝ տագնապալից կասկածները (ընդունենք՝ նաեւ Թուրքական քարոզչութեան հրահրմամբ) բազմանալու են;*

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*
*«ԱՌԱՒՕՏ»*

## ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀՅԴ-Ն ԻՐԵՆ ՀՌՉԱԿԵՑ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՅԴ ԳՄ անդամ Արմէն Ռուստամեանն Ապրիլ 27-ին պաշտօնապէս յայտարարեց քաղաքական կոալիցիային ՀՅԴ-ի մասնակցութեան դադարեցման, կառավարութիւնում իրենց պորտֆելների վայր դրման եւ այլեւս ընդդիմութիւն լինելու մասին: ՀՅԴ-ի կոալիցիայից դուրս գալու պատճառը պարոն Ռուստամեանը բացատրեց ԼՂ հիմնախնդրի եւ Հայ-Թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ Սերժ Սարգսեանի որդեգրած քաղաքականութեամբ: «Արտաքին քաղաքականութեան ոլորտում մենք տարաձայնութիւններ ենք ունեցել նաեւ Ռոբերդ Քոչարեանի հետ, սակայն այս անգամ տարաձայնութիւններն անյաղթահարելի էին»:*

*ՀՅԴ-ն իր վերջնական որոշումը կայացրել է մասնաւորապէս հայ-թուրքական յարաբերութիւնները կարգաւորելու վերաբերեալ Շուեյցարիայում ՀՀ-ի եւ Թուրքիայի ԱԳ նախարարների միջեւ կնքուած համաձայնագրից յետոյ: Արմէն Ռուստամեանն այսօր հաստատեց, որ նախորդ շաբաթ ինքն ու ՀՅԴ Բիւրոյի անդամ Հրանդ Մարգարեանը հանդիպել են Սերժ Սարգսեանին, սակայն այդ հանդիպումը չի փոխել ՀՅԴ-ին կոալիցիայից դուրս գալու որոշման վրայ. «Նախագահը մեզ վստահեցրել է, որ նոյն տրամաբանութեամբ շարունակելու է կարգաւորել հայ-թուրքական յարաբերութիւնները»:*

## ԼԵՒՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆ: ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ ԴԱՌՆԱԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՊԷՏՔ Է ՎԱՍՏԱԿԵԼ,

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ապրիլ 28-ին «Փաստարկ» ակումբում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Հայ Ազգային Կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբեանը մեկնաբանել է Դաշնակցութեան կոալիցիայից դուրս գալու փաստը:*

*«Անկեղծ ասած, մենք դեռ չենք նկատել, որ Դաշնակցութիւնը դուրս է եկել կոալիցիայից: Երբ կը նկատենք, կը մեկնաբանենք: Գիտէք կարելի է յայտարարել, որ դու ընդդիմութիւն ես, բայց իրականում ընդդիմութիւն դառնալու իրաւունքը պէտք է վաստակել»,- նշել է Զուրաբեանը:*

*Միեւնոյն ժամանակ, նա յաւելել է, որ Դաշնակցութեան յայտարարութիւնն իրենք գնահատել ենք «որպէս առաջին ծիծեռնակ, որպէս առաջին նշաններ, որ այս ռեժիմը կենսունակ չէ, եւ ապագայում կը լինեն նոր զարգացումներ»:*

*«Եթէ Դաշնակցութիւնն ընտրի սկզբունքային ընդդիմութեան ճանապարհը, ես չեմ բացառում համագործակցութեան հնարաւորութիւնը»,- եզրափակել է Զուրաբեանը:*

## ԽԼԵԼ ԵՆ ԹՌՈՒՑԻԿՆԵՐԸ, ԾԵԾԿՌՏՈՒՔ ՍԱՐՔԵԼ, ԱՌԵՒԱՆԳԵԼ...

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ապրիլ 27-ին քաղաքացիական հագուստով անձանց խմբերը, Երեւանի տարբեր մասերում՝ Ամիրեան փողոցում, Մաշտոցի պողոտայում, Կարապի լճի մօտ եւ Արաբկիրում յարձակուել են Հայ ազգային կոնգրեսի կողմից Մայիսի 1-ին հրաւիրած արտօնուած հանրահաւաքի իրազեկման թռուցիկները բաժանող երիտասարդների վրայ, ծեծկռտուք սարքել, խլել թռուցիկները, ոմանց առեւանգել:*

*Մօտիկ գտնուող ոստիկանները ոչ մի կերպ չեն արձագանքել բանդիտական խմբերի գործողութիւններին նաեւ այն բանից յետոյ, երբ նրանց դիմել են: Թռուցիկներ բաժանող խմբերին ուղեկցող լրագրողները կարողացել են լուսանկարել բոլոր յարձակուողներին եւ նրանց մեքենաները: Ըստ նախնական տուեալների, յարձակուող այդ խմբերի մէջ եղել են նաեւ ոստիկանութեան քրէական բաժնի քաղաքացիական բաժնի աշխատողներ, ինչը կը ճշդուի համապատասխան լուսանկարների ուսումնասիրութեամբ: Աւելի ուշ նրանք դարանակալել են նաեւ Հայ Ազգային կոնգրեսի Գրասենեակի մօտ եւ հենց այդտեղից առեւանգել վերադարձող երիտասարդներից մէկին:*

*Հայ Ազգային Կոնգրեսը յայտարարում է, որ միաժամանակ տարբեր տեղերում այս յանցաւոր գործողութիւնները ակնյայտօրէն մէկ կենտրոնից կազմակերպուած միջոցառում է, ինչի համար պատասխանատուութիւն է կրում գործող իշխանութիւնը եւ առաջին հերթին քաղաքապետ Գագիկ Բեգլարեանը: Համապատասխան նիւթերը, բոլոր բանդիտների լուսանկարներով, կը յանձնուեն իրաւապահ մարմիններին, քրէական գործ յարուցելու պահանջով: Նիւթերը կը ներկայացուեն նաեւ պատկան միջազգային կառոյցներին:*

*Անկախ օրինական իրազեկման դէմ իշխանութեան կազմակերպած ապօրինութիւններից, Հայ Ազգային Կոնգրեսի՝ Մայիսի 1-ի հանրահաւաքը լինելու է հզօր եւ քաղաքական իրավիճակի արմատական փոփոխման սկիզբ է դառնալու ասուած է հաղորդագրութեան մէջ:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## «ԳԱՂՏՆԱՁԵՐԾԷՔ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԷԶ ԱՍՈՒԱԾԸ»



ՀԺԿ Նախագահ Ստեփան Դեմիրճեան

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Անհրաժեշտ է, որպէսզի իշխանութիւնը շատ արագ գաղտնազերծի ճանապարհային քարտէզ ասուածը՝ գործողութիւնների ծրագիրը,-այսօր լրագրողների հետ հանդիպման ընթացքում յայտարարեց ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը: Նա յիշեցրեց, որ Կոնգրեսը կողմ է Թուրքիայի հետ առանց նախապայմանների յարաբերութիւնների հաստատմանը, եւ դէմ է յատկապէս պատմաբանների յանձնաժողով ստեղծելու գաղափարին եւ հայ-թուրքական սահմանի բացումը ԼՂՀ խնդրի հետ կապելու փորձերին:*

*Պատասխանելով ՀՅԴ կոալիցիայից դուրս գալու որոշման վերաբերեալ հարցին, Ստեփան Դեմիրճեանն ասաց, որ դաշնակցութիւնը բաւարար հիմքեր ունի նման քայլի դիմելու համար: Իսկ ՀՅԴ-ի հետ, կոալիցիայից դուրս գալուց յետոյ հնարաւոր համագործակցութեան վերաբերեալ էլ ասաց, որ ազգային կարեւորագոյն հարցերի վերաբերեալ Կոնգրեսը եւ ՀԺԿ-ն պատրաստ են համագործակցել ամենատարբեր ուժերի հետ:*

*Աւագանու ընտրութիւններում կոնգրեսի ցուցակի 2-րդ հորիզոնականը զբաղեցնող Ստեփան Դեմիրճեանը կարծում է, որ ընդդիմութիւնն առաջիկայ ընտրութիւններում բոլոր շանսերն ունի յաղթելու, եթէ իհարկէ անցկացուեն նորմալ ընտրութիւններ: Մրցակիցներին Դեմիրճեանը չի թերագնահատում, իսկ լրագրողի հարցին, թէ որ ուժի յաղթանակի դէպքում ընդդիմութիւնը չի բողոքարկի քուէարկութեան արդիւնքները, Դեմիրճեանը պատասխանեց. «Ընդդիմութեան համար բողոքարկումը ինքնանպատակ չի, թող չկեղծեն ընտրութիւնները, մարդիկ փողոց դուրս չեն գայ հանրահաւաքների կազմակերպիչը իշխանութիւնն է, որը չի կարողանում նորմալ, արդար ընտրական գործընթաց ապահովել»:*

## ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ ՇՈՒՏՈՎ ԿԸ ԼՈՒԾՈՒԻ՞

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ղարաբաղեան հարցը մէկ ամսում չէ, բայց յոյս ունենք, որ մի քանի ամսից կ՚ստանայ լուծում,-այսօր Երեւանում յայտարարեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզան:*

*«Ղարաբաղեան հարցում առաջընթացի ողջամիտ յոյսեր կան»,- նկատեցին համանախագահները Երեւանում, Բաքւում, ապա նորից Երեւանում իրենց գտնուելու ընթացքում ստացած տպաւորութեամբ: Նրանք երկու կողմերի մօտ էլ նկատել են պատրաստակամութիւն՝ խնդրի արագ կարգաւորման ուղղութեամբ: Նաեւ ձեռք է բերուել համաձայնութիւն մայիսի 7-ին Պրահայում կայանալիք հանդիպման վերաբերեալ: «Պրահեան հանդիպումը ծայրաստիճան կարեւոր կարող է լինել»,- կանխատեսեց ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիէն, որը ընդհանրապէս դրական գնահատեց երկու երկրների ղեկավարների նախկինում ունեցած երեք հանդիպումները եւս:*

*Պրահեան հանդիպման օրակարգում քննարկուելու են նախկինում չհամաձայնեցուած մի շարք հարցեր. Իսկ բանակցային սեղանին լինելու են մադրիդեան առաջարկութիւնները՝ բացայայտեցին համանախագահները:*

*Ֆրանսիացի համանախագահը յատկապէս ընդգծեց Ալիեւի կառուցողական դիրքորոշումը, եւ յիշեցրեց, որ Ռուսաստանում Իլհամ Ալիեւը աննախադէպ յայտարարութիւն արեց՝ ԼՂՀ ժողովրդի անվտանգութեան երաշխիքների եւ «ինքնակառավարման» վերաբերեալ: Լրագրողները նկատեցին, որ Ալիեւը նաեւ յայտարարեց, որ չի կարող խնդիրը լուծուել Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան հաշուին: Համանախագահները չմեկնաբանեցին Ալիեւի յայտարարութիւնը, բայց ռուսաստանցի համանախագահ Եուրի Մերզլեակովը նկատեց, որ հանրաքուէից աւելի արդիւնաւէտ ձեւ չկայ այդպիսի հարցերը լուծելու համար:*

*Հայ-Թուրքական ջերմացող յարաբերութիւնները եւ ապրիլի 22-ին ստորագրուած յայտարարութիւնը ողջունեցին ամերիկացի եւ ֆրանսիացի համանախագահները: Ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասյէն նկատեց, որ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը դրական կը լինի ողջ տարածաշրջանի համար: Ամերիկացի Մեթիւ Բրայզան էլ նշեց, որ ԱՄՆ-ն միշտ կողմնակից է եղել Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորմանը. «ԱՄՆ-ն սատարում է այս գործընթացի զարգացմանը եւ միշտ եղել ու մնում է այն դիրքորոշմանը, որ այդ գործընթացը պէտք է զարգանայ առանց նախապայմանների»:*

*Ռուս համանախագահ Եուրի Մերզլեակովը այս հարցին չանդրադարձաւ, իսկ պատասխանելով ՀՀ-ում ռուսական ռազմաբազայի ճակատագրի վերաբերեալ հարցին, ասաց. «Որքան ես գիտեմ, Ռուսաստանը մտադիր չէ տեղաշարժել Հայաստանում իր ռազմական բազան հայ-թուրքական երկխօսութեան կապակցութեամբ»:*

*Իսկ Ռեջէփ Թաիփ Էրդողանի յայտարարութիւնների կապակցութեամբ, թէ մինչեւ չլուծուի ԼՂՀ հարցը հայ-թուրքական սահմանը չի բացուի, Բեռնար Ֆասյէն ասաց, որ իրենք չեն ցանկանում մեկնաբանել տարբեր պաշտօնեաների յայտարարութիւնները, բայց նաեւ յիշեցրեց, որ Թուրքիան ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ է:*

*Իսկ Ճանապարհային քարտէզի մանրամասների վերաբերեալ համանախագահներն իրենց իրաւունք չվերապահեցին մեկնաբանութիւններ տալ. միայն ասացին, որ հայ-թուրքական յարաբերութիւնները եւ ԼՂՀ գործընթացը կը զարգանան առանձին:*

## ԼՈՒՐԵՐ

# ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՈԳԵԿՈՉԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*ներ եւ քաղաքական մեկնաբաններ անոր մէջ տեսան Հայաստանի կողմէ զիջումներ եւ Թուրքական կողմի յաղթանակ:*

*Յայտարարութիւնը, թէեւ մանրամասնութիւններ չէր տար «Ճանապարհային քարտէզի մասին, սակայն Թրքական «Սապահ» թերթը, յաջորդ օրը եկաւ ներկայացնելու «քարտէզի» կէտերը, որոնք Հայաստանի կողմէ չհերքուեցան:*



*Ընդդիմադրութեան երթը Երեւանի փողոցներով*

*«Սապահ» թերթը, հիմնուելով Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութեան իր աղբիւրներուն վրայ, կը տեղեկացնէ որ, «ճանապարհային քարտէզը» բաղկացած է հինգ կէտերէ.*

*- Հայաստանը կը ճանչնայ Հայաստանի, ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի միջեւ կնքուած Կարսի պայմանագիրը.*

*- Պատմաբաններու խառն յանձնաժողով կ'ստեղծուի՝ ուսումնասիրելու համար ցեղասպանութեան մեղադրանքները, յանձնաժողովին կրնան միանալ նաեւ երրորդ երկիրներ.*

*- Կը բացուի սահմանը, համապատասխան համաձայնագրեր կը ստորագրուի առեւտուր սկսելու համար.*

*- Երկու կողմերը Վրաստանի իրենց դեսպաններուն կը հաւատարմագրեն Անգարայի եւ Երեւանի մէջ, որմէ ետք կ'ստեղծուին դիւանագիտական ուղղակի յարաբերութիւններ.*

*- «Ճանապարհային քարտէզի» այն համաձայնագրերը, որոնք օրէնսդիր մարմնի հաստատման կարիք ունին, կը քննարկուին խորհրդարաններու կողմէ:*

*«Սապահ» կ'աւելցնէ թէ, այս կէտերուն մէջ Ղարաբաղի մասին խօսք չկայ, սակայն այդ հարցի լուծումը անմիջականօրէն կապուած է միւս բոլոր հարցերուն:*

### 94-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ

*Հակառակ այս զարգացումներուն, հայութիւնը ամենուրէք եկաւ անգամ մը եւս խոնարհելու իր բիւրաւոր նահատակներու յիշատակին առջեւ:*

*Տասնեակ հազարաւոր մարդիկ Ապրիլ 24-ի առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:*

*Ընդդիմութեան համակիրները Հայ Ազգային Գոնկրէսի կոչերուն անսալով, հաւաքուելով Հիւսիսային պողոտայի վրայ, երթով շարժեցան դէպի Ծիծեռնակաբերդ:*

*Դէպի Ծիծեռնակաբերդ երթի մասնակիցները, գլխաւորութեամբ ընդդիմութեան առաջնորդներուն, անցան Թումանեան փողոցով, Մաշտոցի եւ Բաղրամեան պողոտաներով, Քիեւեան փողոցով: Այս հատուածներուն վրայ երթեւեկութիւնը միակողմանի փակուած էր, եւ մարդիկ հնարաւորութիւն ունէին տեղաշարժուելու փողոցի միայն մէկ հատուածով: Մարդկային հոսքը երթալով կը մեծնար. Ճանապարհին անոնց կը միանային նորանոր խումբեր:*

*Երթի ընթացքին կը հնչէին հայրենասիրական երգեր եւ քաղաքական բովանդակութեամբ կոչեր՝ «Լեւոն Նախագահ», «պայքար, պայքար մինչեւ վերջ» եւայլն:*



*Ընդդիմադրութեան թափօրը կը մօտենայ Յուշարձանի*

*ՀՀ Նախագահի նստավայրի մօտ ոստիկանութիւնը արգիլեց մայթով քալել: Ոստիկանները երկար շղթայ կազմած, փակած էին նախագահական նստավայրը, ինչ որ յառաջացուց երթի մասնակիցներու գայրոյթը: Անոնք սկսան սուլել:*

*Քիեւեան կամուրջի վրայ երթին միացաւ ՀՀ առաջին Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, տիկնոջ՝ Լիւդմիլա Տէր-Պետրոսեանի հետ: Այնուհետեւ, Գոնկրէսի բազմահազար համակիրները շարժեցան դէպի Մեծ Եղեռնի զոհերու յիշատակը յաւերժացնող յուշահամալիր: Քիեւեան կամուրջի մօտէն, սգոյ երթը շարունակուեցաւ լռութեամբ:*

*Ընդդիմադրութեան ղեկավարները ծաղիկներ դրին յաւերժական կրակի մօտ եւ ապա հեռացան:*

*Օրուայ ընթացքին հազարաւոր քաղաքացիներ հանրապետութեան մարզերէն, սփիւռքէն ու արտասահմանէն, իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Ցեղասպանութեան զոհերու յիշատակին:*

*Յայտնենք որ, ժամը 11-ի մօտ դէպի մարդկային հոսքը կանգնեցուեցաւ երբ յուշահամալիր ժամանեցին Սերժ Սարգսեանն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընկերակցութեամբ պետական միւս պաշտօնեաներուն:*

*Մօտ կէս ժամ մարդկային հոսքը դադարեցուած էր, ապահովութեան նկատառումով:*

*ՀՀ իշխանութիւնը, որ երկու օր առաջ ստորագրեց Թուրքիոյ հետ յարաբերութիւններ հաստատելու վերաբերեալ յայտարարութիւնը, գլխիկոր կանգնած էր անմար կրակի առջեւ եւ կը լսէր Գարեգին Երկրորդի աղօթքը:*

# «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԷԶ». ՖՈՐՍՄԱԺՈՐ

*Շարունակուած էջ 2-էն*

*մը պայմանաւորուած չէ տարածքային ոչ մի հենքով (ազատագրուած տարածքներ, ղարաբաղեան կարգաւորում, Ղարսի կամ Սեւրի պայմանագրեր), ապա կը նշանակի, որ Ադրբեջանի ԱԳՆ «մեսիջն» աւելի մօտ է իրականութեանը:*

*Իսկ Թուրքիայից «հերքում կորզելու» համար հայկական դիւանագիտութիւնը պիտի յենուի նոյն ԱՄՆ եւ, ինչու չէ, Ռուսաստանի դիւանագիտական աջակցութեան վրայ, որի համար այսօր գերազանց հնարաւորութիւն կայ:*

*Աւելորդ չի լինի նկատել, որ այս սկզբունքային դիւանագիտական ճակատում Հայաստանի պարտութիւնը ոչ միայն բացասական ազդեցութիւն կ'ունենայ մեր երկրի ու ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման վրայ, այլեւ ծանր, միգուցէ ճակատագրական հարուած հասցնի Սփիւռքին: Չի բացառւում նաեւ, որ այս համատեքստում ներքաղաքական լուրջ ձեւափոխութիւններ սկսուեն հենց Հայաստանի քաղաքական դաշտում, որը խիստ նրբազգաց է հենց ազգային ընկալումներում: Վկան՝ 1998 թուականին տեղի ունեցած իրադարձութիւնները:*

*ԷԴՈՒՐԴ ՍԱՐԻԲԷԿԵԱՆ*
*«7 ՕՐ» ԿԱՅՔԷՋ*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

# ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*թիւնը, Գալփաքեան եւ Նազարեան նկատուեցան ընտրուած:*

*Նոյնը պատահեցաւ Մեթնի ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Պուրճ Համուտ քաղաքը: Դաշնակցութեան թեկնածու Յակոբ Բագրատունի նկատուեցաւ ընտրուած:*

*Այսուհանդերձ, Հայկական մնացեալ երեք աթոռներուն համար կը սպասուի սուր պայքար Հնչակեան, Ռամկավար եւ Դաշնակցական կուսակցութիւններու զօրակցութիւնը վայելող թեկնածուներուն միջեւ:*

*Պէյրութի առաջին ընտրաշրջանէն ներս Հայ Կաթողիկէ աթոռին համար Հնչակեան կուսակցութիւնը ներկայացուցած է Խորհրդարանի անդամ իրաւաբան Սերժ Թուրսարգիսեանի թեկնածութիւնը, իսկ Ռամկավար կուսակցութիւնը՝ Խորհրդարանի անդամ նախարար Ժան Օղասապեանի թեկնածութիւնը: Այս երկուքի դիմաց Դաշնակցութիւնը առաջադրած է Կրէկուար Գալուստի եւ Վրէժ Սապունճեանի թեկնածութիւնները:*

*Զահլէի ընտրաշրջանէն ներս, որ կ'ընդգրկէ հայկական Անճար քաղաքը, Հայ Առաքելական միակ աթոռին համար, Խորհրդարանի այժմու անդամ դաշնակցական Ճորճ Քասարճիի դէմ թեկնածու կը ներկայանայ Դաշնակցութենէն անջատուած՝ Ազատ Հայերու Շարժումի ղեկավար Նարեկ Աբրահամեանը:*

*Յայտնենք որ, դաշնակցութիւնը մաս կը կազմէ Հըզպալահի գլխաւորած «Մարտ 8» ճակատին, իսկ Հնչակեանները, Ռամկավարները եւ Ազատ Հայերը կը յարին Սաատ Հարիրիի գլխաւորած «Մարտ 14» ճակատին:*

# ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱ ՕԳՏԱԳՈՐԾԵՑ «ՄԵԾ ԵՂԵՌՆ» ԲԱՌԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*Ամերիկայի նախագահի խօսքին առթիւ, Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) եկաւ յայտնելու իր յուսախաբութիւնը, որովհետեւ Օպաման այսպիսով դրժած եղաւ իր նախընտրական խոստումը:*

*«Թէեւ Նախագահը աւելի առաջ գնաց քան իր նախորդները եւ շեշտեց որ իր «Անձնական տեսակէտները չէ փոխած», սակայն ան շեղեցաւ պատմական իրողութիւնը որպէս «ցեղասպանութիւն» որակելու իր խոստումէն»,- ըսուած էր ՀԱԽ-ի յայտարարութեան մէջ:*

*«Ցաւալի է որ, նախագահ Օպամա, որ կը ձգտի ըլլալ Հայկական Ցեղասպանութեան մասին ճշմարտութիւնը ըսող նախագահ մը, ձախողութեան մատնուեցաւ իր խոստումին մէջ, ենթարկուելով Թրքական կառավարութեան սպառնալիքներուն, կապուած Հայաստանի հետ յարաբերութիւններու բարելաւման եւ Միացեալ Նահանգներու աշխարհաքաղաքական նպատակներուն օժանդակելու հարցերով»,- այս առթիւ յայտարարեց ՀԱԽ-ի ատենապետ Վազգէն Խոտանեան:*

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ 11 ՄԻԼԻՈՆ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ

### Հարցազրոյց ՍԴՀԿ կենտրոնական վարչութեան ներկայացուցիչ, ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեանի հետ

- Պարոն Շիրխանեան, հայ-թուրքական յարաբերութիւնների ջերմացման մասին ի՞նչ կ՛ասէք: Այս օրերին այն ամենաքննարկուող թեմաներից մէկն է:

*- Մենք Թուրքերի հետ ջերմացնելու ոչինչ չունենք, քանի դեռ Թուրքիան չի ընդունել Ցեղասպանութիւնը, չի ճանաչել ԼՂՀ անկախութիւնը, չի հանել իր զինուժը Նախիջեւանի տարածքից:*

- Բայց գործող իշխանութիւնը պնդում է, որ Հայաստանին առանց նախապայմանների սահմանի բացումը ձեռնտու է:

*- Ես չասացի, որ այս պայմանները կատարելուց յետոյ կարելի է սահմանը բացել: Հայ-Թուրքական յարաբերութիւնները, Հայաստան-Թուրքիա միջպետական յարաբերութիւնների դաշտում չեն: Դրանք ցեղասպան Թուրքիա- Համայն հայութիւն յարաբերութիւնների դաշտում են: Ոչ ոք չի կարող 11 միլիոն հայերին զրկել Թուրքիայի հետ յարաբերութիւնները ջերմացնելու կամ սառեցնելու մասին որոշում ընդունելու նրանց պատմական, ազգային, իրաւաբանական, բարոյական իրաւունքից: Ուրեմն, ո՞վ է իրենց թոյլ տուել 11 միլիոն հայի անունից յայտարարել, որ առանց նախապայմանի մենք հաշտւում ենք Թուրքիայի հետ: Կարծում եմ, որ հայ-Թուրքական յարաբերութիւնների ջերմացում ասուածը ոչ թէ Հայաստանից է սկսուել, այլ ինչ որ արտաքին ուժեր կան, որոնց դա ձեռնտու է:*

- Ո՞ւմ եւ ինչո՞վ է ձեռնտու:

*- Թուրքիան արդէն իսկ, միայն ձեւացնելով, որ ուզում է կարգաւորել յարաբերութիւնները Հայաստանի հետ, զգալիօրէն դանդաղեցրեց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը Եւրոպայում եւ ԱՄՆ-ում: Փորձում է հարթել ճանապարհը դէպի Եւրամիութիւն: ԱՄՆ-ը, հասնելով սահմանի բացմանը, չէզոքացնում է Ռուսաստանի ազդեցութիւնը եւ մասամբ վերականգնում Վրաստանում կորցրած իր վարկը: Հայաստանը, ընկնելով թուրքական տնտեսական էքսպանսիայի տակ, 1-2 տարուց կը դադարեցնի պայքարը ԼՂՀ անկախութեան համար: Ինչպէս տեսնում էք, սահմանի բացումը ձեռնտու է*



*բոլորին՝ բացի Հայաստանից եւ հայութիւնից:*

- Իսկ Հայաստանի համար օգտակար որեւէ նշանակութիւն չունի՞ սահմանի բացումը: Տեսակէտ կա, որ դրանից կը շահի մեր երկրի տնտեսութիւնը:

*- Զկայ տնտեսական օգուտ, կա ներքին արտադրութեան քայքայման, ոչնչացման իրական հեռանկար: Բայց հայ-Թուրքական յարաբերութիւնները պէտք է դիտարկուեն միմիայն ազգային ու քաղաքական հարթութեան վրայ: Այստեղ տնտեսական շահ փնտռելն իսկ անբարոյականութիւն է, անարգանք է միլիոնաւոր նահատակների եւ հարիւրաւոր գաղթօջախներում ապրող հայերի հանդէպ: Մեր երկրի տնտեսութիւնը կը շահի, կը զարգանայ այն ժամանակ, երբ ունենայ գործունակ, օրինական, ժողովրդին ծառայող եւ նրան հաշուետու իշխանութիւն: Մեր աղքատութիւնը, քայքայուածութիւնը պայմանաւորուած է միայն այդպիսի իշխանութիւն չունենալու փաստով: Իսկ փակ սահմանը, առաւել եւս ղարաբաղեան խնդրի «չկարգաւորուածութիւնը» տնտեսական պրոբլեմների հետ կապելը պարզապէս ժուլիկութիւն է:*

- Այսինքն՝ կարծում էք, որ Սերժ Սարգսեանը չի՞ կարող լուծել հարցը:

*- Սերժ Սարգսեանը, եթէ նոյնիսկ ընտրուած լինէր Հայաստանի բոլոր ընտրողների կողմից՝ իսկապէս արդար ընտրութիւնների արդիւնքում, դարձեալ իրաւունք չէր ունենայ սահմանին մօտենալ, որովհետեւ դա բոլոր 11 միլիոն հայերի խնդիրն է: Սերժ Սարգսեանը իրաւունք չունի լուծում տալ նաեւ Արցախի հարցին, քանի որ դա եւս ողջ հայութեան խնդիրն է:*

- Դուք թէեւ անընդունելի էք համարում Հայաստանի իշխանութիւնների միջամտութիւնը նշուած հարցերում, բայց լաւ գիտէք, որ եթէ ճնշումներ լինեն գերտէրութիւնների կողմից, նրանք չեն կարող տեղի չտալ այդ ճնշումներին:

*- Եթէ հայ հասարակութիւնը դէմ լինի սահմանի բացմանը, ոչ մի գերտէրութիւն անգամ ամենածախու իշխանութեանը չի կարող նման բան ստիպել: Այո, դա ձեռնտու է ԱՄՆ-ին, Թուրքիային, Ադրբեջանին: Աւելի հեշտ ճանապարհ՝ Ցեղասպանութեան սպառնալիքը հեռացնելու, Թուրքիան չունի: Ինչո՞ւ չպէտք է ուզենայ բացել սահմանը: Մեզանում տարիներ շարունակ գոյութիւն ունեցող քաղաքական խառնաշփոթը, տաբերային գործողութիւնները պայմանաւորուած են մի բանով՝ մենք չունենք Ազգային գաղափար եւ Միասնական նպատակ: Այդ ժամանակ Սերժ Սարգսեանը կ՛իմանար իր անելիքը եւ իրաւասութիւնների սահմանները, կոալիցիայի անդամ կուսակցութիւնները կ՛իմանային իրենց անելիքները:*

- Պարոն Շիրխանեան, թէեւ Դուք խօսում էք հայ-թուրքական սահմանի բացման անթոյլատրելիութեան մասին, բայց ակնյայտ է, որ մեր հասարակութեան մեծ մասը այդ վտանգները չի տեսնում, աւելին՝ դրական է համարում բացումը:

*- Շատ դժուար է իսկապէս: Այն քաղաքական ուժերը, որոնք հասկանում են սահմանի բացման վտանգը, պէտք է միաւորուեն եւ ժողովրդին բացատրեն, թէ ինչ հետեւանքներ կարող է դա ունենալ ամէն մի ընտանիքի, հայի համար: Միջազգային խոշոր դերակատարների կողմից երկակի ստանդարտների կիրառումը համատարած է: Քսանից աւելի երկրներ, միջազգային կառոյցներ ընդունել են Ցեղասպանութեան փաստը: Սակայն նրանք գործնականում ոչ միայն չեն պահանջում ցեղասպան երկրին պատասխանատուութեան ենթարկել (ՄԱԿ-ի կոնվենցիան դա է պարտաւորեցնում), ոչ միայն չեն սահմանափակել իրենց յարաբերութիւնները ցեղասպան երկրի հետ, քանի դեռ նա իր մեղքը չի ընդունել, ոչ միայն շարունակում են ցեղասպան երկրի հետ քաղաքական, տնտեսական ջերմ համագործակցութիւնը, այլեւ ամէն ինչ անում են Թուրքիային Ցեղասպանութեան ճանաչումից եւ պատասխանատուութեան ենթարկելուց փրկելու համար: Այստեղ առաջատարը, ինչպէս միշտ« Մեծ Բրիտանիան է: Բայց այս միջամտութիւնները արդէն ոչ մի կապ չունեն քաղաքականութեան, խաղաղութեան ամրապնդման հետ: Սա արդէն ռասիզմի բարձրագոյն դրսեւորում է, երբ անձնական շահի հետապնդումով հարցականի տակ են դնում ոչ միայն Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման, Արցախի անկախութեան, այլ Հայաստանի՝ որպէս պետութիւն, պահպանման հարցը: Համոզուելու համար բաւական է կարդալ հանրայայտ «Ճգնաժամային խմբի» հայ-Թուրքական յարաբերութիւնների վերջին զեկոյցը:*

- Կարծում էք, ԱՄՆ այս նախագահը նոյնպէս չի արտասանի ցեղասպանութիւն բառը:

*- Ես վստահ եմ, որ վաղ թէ ուշ, Թուրքիան կ՛ընդունի Ցեղասպանութեան փաստը եւ միջազգային դատարանով կը հատուցի բոլոր վնասները: Սահմանն էլ ինչքան փակ մնայ, Հայաստանը այնքան հանգիստ եւ ապահով կապրի: Կարող է Օբաման չարտասանի: Բայց եթէ նոյնիսկ արտասանի, մեծ բան չէ, նրանք վաղուց պէտք է ճանաչած լինէին այդ փաստը եւ Թուրքիային պարտադրած լինէին՝ գնալ հատուցման ճանապարհով: Դա չպէտք է ընկալել որպէս լաւութիւն հայերին: Դա ապագայ ցեղասպանութիւնների կանխման միակ ճանապարհն է: Եթէ Թուրքիան ժամանակին պատժուած լինէր, միգուցե չլինէի՞ն Հոլոքոստը, Կամբոջան, Արգենտինան, Դարֆուրը, Ռուանդան, Իրաքը...*

*Զրուցեց՝*
***ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍԵԱՆ***
***«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»***
*Ապրիլ 22, 2009*

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅԹ

Նախաձեռնութեամբ՝
Հ.Մ.Մ.-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի Պատիւ՝ Հ.Մ.Մ.-Ի ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԵՒ ՎԵԹԵՐԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

Տեղի կ՛ունենայ՝ Ուրբաթ, 8 Մայիս 2009
երեկոյեան ժամը 8:00-ին
Հ.Մ.Մ.-ի Կարօ Սողանալեան սրահէն ներս
1060 N. Allen Ave., Pasadena

*Փափաքելի է Ձեր ներկայութեամբ պատուէք նաեւ տարբեր շրջաններէ ներկայ գտնուող սիրուած Հ.Մ.Մ.-ականները:*

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀՐԱՒԷՐ

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ**

# ՆԵՈՕՍՄԱՆԻԶՄԻ ԴՈԿՏՐԻՆԻ ՀԻՒՍԻՍԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

Անցած տարիների ընթացքում միշտ ուշագրաւ է եղել այն հանգամանքը, որ վրաց-աբխազական հակամարտութեան ողջ ընթացքում Թուրքիան գործնականում չի տեղեկացրել Վրաստանին Աբխազիայում կատարած իր գործողութիւնների մասին, ըստ էութեան, անտեսելով այդ հարցում Թբիլիսիի կարծիքը: Նոյնը տեղի էր ունենում Աճարիայում: Վերջին ամիսներին Թուրքիան փորձում է որոշակիօրէն ինստիտուցիոնալացնել կամ առաւելագոյնս պաշտօնական բնոյթ հաղորդել Աբխազիայում իր քաղաքականութեանը: Վրաստանում Թուրքիայի դեսպանի մասնակցութիւնն Աբխազիայի հետ յարաբերութիւններ կառուցելու գործին, ընդ որում, կազմակերպելով աբխազական խնդիրների լայն քննարկում, խօսում է այն մասին, որ թուրքական քաղաքական ներկայութիւնն Աբխազիայում ձեռք է բերում նոր մակարդակ:

Թուրքական մամուլի համայնապատկերում, ինչպէս նաեւ առանձին թուրքական վերլուծաբանների հրապարակումներում ակնյայտ է Թուրքիայի հետաքրքրութեան աճն Աբխազիայի նկատմամբ:

Սա մէկուսի հետաքրքրութիւն չէ, այլ «Նեոօսմանիզմի դոկտրինի» ակտիւացման տարր Թուրքիայի քաղաքականութեան մէջ: Անքարան ակտիւացել է ամբողջ «նեոօսմանական» ճակատով՝ Պալքաններ, Սեւծովեան աւազան, Կովկաս, Հիւսիսային Իրաք եւ հնարաւոր է նոյնիսկ Իրան: Այս կապակցութեամբ, բնականաբար, հարց է առաջանում, թէ ինչպէս է Թուրքիան իրագործելու իր քաղաքականութիւնն Աբխազիայում, Վրաստանի էթնիկ երկրամասերում եւ միաժամանակ յարաբերութիւններ կառուցելու Թբիլիսիի հետ:

Ամենայն յաւանականութեամբ, Անքարան ունի լաւ մշակուած մօտեցումներ, որոնք ամենից առաջ ենթադրում են ինտերակտիւ քաղաքականութեան իրագործում:

Դա ենթադրում է ուժեղացնել իր ազդեցութիւնը էթնիկ երկրամասերում իբրեւ մեծ տարածաշրջանների վրայ, ինչպէս նաեւ Վրաստանի ու Ռուսաստանի նկատմամբ ազդեցութեան ընդլայնման միջոց: Համարժէք խնդիրներ: Անքարան փորձում է լուծել նաեւ Գագաուզիայում ու Ղրիմում: Այս էթնիկ երկրամասերի օրինակով կարելի է բացայայտել այն նախանշաններն ու Թուրքիայի քաղաքականութեան նոր տարրերը, որոնք առկայ են Ռուսաստանի նկատմամբ Անքարայի դիրքորոշումներում: Որոշակի փուլից յետոյ, որը կարելի է համարել «մեղրամիս» ռուս-թուրքական յարաբերութիւններում, Անքարան համոզուել է, որ չնայած լայնածաւալ համատեղ նախագծերին ու ընդհանուր մտադրութիւններին, Ռուսաստանը բոլորովին էլ չի պատրաստւում այդ տարածաշրջաններում իր ազդեցութիւնը զիջել Թուրքիային: Դա Անքարայում հանգեցրել է այն հետեւութեան, որ սպասողական քաղաքականութիւնն անիմաստ է, ու Թուրքիան անցել է աշխարհաքաղաքական «յարձակման», որ համարժէք է այն քաղաքականութեանը, ինչը փորձում է իրագործել Ռուսաստանը: Մոսկուայի կողմից Հարաւային Օսիայի եւ յատկապէս Աբխազիայի անկախութեան ճանաչումը, անկասկած, թաքուն բաւականութիւն եւ նոր սպասումներ է առաջացրել Անքարայում: Միանշանակ է, որ այս նոր իրավիճակում Թուրքիան ձեռք է բերել իր ազդեցութիւնը Հիւսիսային Կովկասում ուժեղացնելու հեռանկարներ, նորից կառուցելու իր յարաբերութիւններն Աբխազիայի, չերքեզների եւ հիւսիսկովկասեան այլ ժողովուրդների հետ:

Թուրքիան լիովին պատրաստ է հզօր ներդրման Հիւսիսային Կովկասում, յատկապէս նկատի ունենալով աբխազական էլիտայի յաւակնութիւնների օգտագործման հնարաւորութիւնը: Թուրքիայում վաղուց գոյութիւն ունեն հիւսիսկովկասեան ժողովուրդների տարաբնոյթ կազմակերպութիւններ, սակայն վերջին ժամանակներս այդ աշխատանքը ձեռք է բերել նոր բովանդակութիւն, ինչը պայմանաւորուած է միանգամից երկու խնդիրներ համադրելու Անքարայի ձգտմամբ: Այսինքն՝ կառուցել աւելի սերտ յարաբերութիւններ Ռուսաստանի հետ եւ միաժամանակ ուժեղացնել էքսպանսիան Հիւսիսային Կովկասում:

Աբխազիայից ստացուող տեղեկութիւնների համաձայն, Թուրքիան արդէն իսկ առաջ է քաշել մինիմում ծրագիր, որը ներառում է թուրքամէտ հասարակական եւ այլ կազմակերպութիւնների ստեղծում, որոնք պիտի օժանդակեն Անքարայի ազդեցութեան աճին Աբխազիայի քաղաքական կառոյցներում: Կայ որոշում՝ ստեղծելու մշտական տնտեսական կապեր, որոնք Աբխազիայի համար ձեռք կը բերեն որոշիչ նշանակութիւն: Դրա մէջ է մտնում նաեւ կանոնաւոր տրանսպորտային կապի կարգաւորումը, կրթական համակարգը վերահսկողութեան տակ վերցնելը: Գոյութիւն ունի Թուրքիայի գլխաւոր շտաբի պետի հրամանը՝ ուժեղացնել գործակալական աշխատանքներն աբխազական զինուած ուժերում: Առաջին անգամ յետխորհրդային տարիների ընթացքում Թուրքիայի պաշտպանութեան նախարարութիւնը որոշակի միջոցներ է յատկացրել մի շարք նպատակների համար: Արտաքին գործերի նախարարութեանը նոյնպէս արդէն տրուած է յանձնարարական Սուխումում թուրքական հիւպատոսութիւն բացելու վերաբերեալ: Վրացական քաղաքական ղեկավարութիւնն արդէն լաւ տեղեկացուած է Թուրքիայի կողմից Աբխազիային ռազմական եւ այլ օգնութիւն ցոյց տալու մասին, ինչը եղել է նաեւ Վրաստանի հետ ռազմական գործողութիւնների ժամանակաշրջանում:

Թուրքական հետախուզութիւնն ու պանթուրքիստական կազմակերպութիւնները մասնակցել են վրաց-աբխազական հակամարտութեանը: Թուրքիայի տարածքում ձեւաւորուել են 8-10-հոգանոց կամաւորական խմբեր՝ աբխազների կողմում ռազմական գործողութիւններին մասնակցելու համար: Վարձկանների տեղափոխումն իրականացւում էր ծովային ճանապարհով՝ Տրապիզոնից Սոչի: Նրանք հաւաքագրւում էին Թուրքիայում բնակուող մահմեդական աբխազներից, այդ գործին ակտիւ աջակցութիւն էր ցուցաբերում թուրքական աբխազների «Աբխազիայի հետ համերաշխութեան ընկերութիւնը»՝ Բ. Տամտեկինի առաջնորդութեամբ:

Ստամպուլից 56 կմ դէպի արեւմուտք գտնուող Ջաթալջա քաղաքում ստեղծուած էր եւ գործում էր յատուկ ճամբար, որտեղ էլ իրականացւում էր աբխազական զինեալների վերապատրաստումը: Սովորական կուրսանտի ուսուցումը տեւում էր երեք շաբաթ, 150-200 մարդ նախապատրաստութիւն էր անցնում թուրքական բանակի նախկին կադրային սպաների ուսուցմամբ: Խմբերի ձեւաւորման առումով առաւելութիւն էր տրւում երիտա-սարդ եւ բանակային ծառայութեան փորձ ունեցող մարդկանց, Թուրքիայում բնակուող աբխազներին, իսկ ֆինանսաւորումն իրականացւում էր պետական միջոցներից:

1992-ի Սեպտեմբերի վերջին թուրքական ռազմաօդային ուժերի ինքնաթիռով եւ Թուրքիայում «Հիւսիսկովկասեան մշակութային ընկերակցութեան» ներկայացուցչի ուղեկցութեամբ Աբխազիա հասցուեց հումանիտար օգնութիւն, որը ներառում էր 16 տոննա դեղորայք, ինչպէս նաեւ զէնք ու զինամթերք: Ռազմական գործողութիւններում աբխազական կողմից այդ ժամանակ արդէն մասնակցում էր կովկասեան ծագում ունեցող Թուրքիայի քաղաքացիների մի խումբ (մօտ 30 մարդ), ովքեր լեգալացուել էին Աբխազիայում իբրեւ Հիւսիսային Կովկասի բուհերում սովորող ուսանողներ: Այնուհանդերձ, այդ ժամանակաշրջանում Անքարայի դիրքորոշումն Աբխազիայի հետ կապուած բնութագրւում էր իբրեւ զուսպ: Ըստ որոշ տուեալների, 1992-ի Օգոստոսի 25-ին թուրքական աբխազների ու չերքեզների ներկայացուցիչների հետ Թուրքիայի զինուած ուժերի գլխաւոր շտաբի պետ Դողան Գիւրեշի (ազգութեամբ՝ չերքեզ) հանդիպման ժամանակ գեներալը նշել է, թէ հարկ չկայ ակնկալել Թուրքիայի պաշտօնական դիրքորոշման փոփոխութիւն Վրաստանի նկատմամբ: Որովհետեւ վրացական տարածքով եւ վրացական իշխանութիւնների գիտութեամբ Թուրքիան զէնք ու զինամթերք էր մատակարարում Ատրպէյճանին եւ այդ ծառայութեան դիմաց միաժամանակ երկարաժամկէտ կտրուածքով համակարգուած պարէնային օգնութիւն էր ցուցաբերում նոյն Վրաստանին:

Արդէն 1988-ից թուրքական յատուկ ծառայութիւնների վերահսկողութեամբ արագացուած տեմպերով ստեղծւում էին բազմաբնոյթ կովկասեան ազգայնական կազմակերպութիւններ՝ աջ ուղղուածութեան, որոնք զբաղուած էին պատմական հայրենիքի հետ կապերի հաստատմամբ: Այս խողովակն ակտիւօրէն օգտագործւում էր թուրքական արտաքին հետախուզութեան (ՄԻԹ) եւ ռազմական հետախուզութեան կողմից՝ տարածաշրջանում իրենց խնդիրների լուծման համար: ՄԻԹ-ի յանձնարարութեամբ Թուրքիայում գործող աբխազների հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչներն ակտիւօրէն մասնակցում էին արտասահմանում ապրող կաբարդինների, չերքեզների եւ ադղների վերաբնակեցմանը պատմական հայրենիքում՝ Հիւսիսային Կովկասում:

Շար.ը էջ 17

Blue Cross of California Authorized Agent
Blue Shield of California Authorized Agent
SERVING SINCE 1975
BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
A.B.A. INSURANCE SERVICES
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ԱՊՐԻԼ 24

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՋԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՑՈՅՑ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՄԷՋ



Photo by Jennifer Koochof www.abfabphotostudio.com

Ուրբաթ, Ապրիլի 24ին, աւելի քան 40,000 հայեր, մեծ կարգապահութեամբ բողոքի ցոյց մը կատարեցին Հոլիվուտի «Փոքրիկ Հայաստան» տարածաշրջանին մէջ: Արդարեւ, Միացեալ Հայ Երիտասարդներու կազմակերպած պահանջատիրական այս մեծածաւալ ցոյցի մասնակիցները տասնեակ մը պաստառներով դատապարտեցին 94 տարիներ առաջ կատարուած 20րդ դարու առաջին Ցեղասպանութիւնը:

Մօտ 2 ժամուան քայլարշաւցոյցի աւարտին, ելոյթներ ունեցան հայ եւ ամերիկացի անձնաւորութիւններ, որոնք ոգեկոչեցին մեր նահատակներու յիշատակը, պահանջելով ցեղասպանութեան ճանաչումը ամերիկեան Գոնկրեսին կողմէ:

Հանդիսութիւնը սկսաւ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի օրհնութեամբ եւ ելոյթով: Բացման խօսքով հանդէս եկաւ Ընկ. Ստեփան Յովակիմեան, ապա Միացեալ Հայ Երիտասարդներու կազմակերպութեան անունով ելոյթ ունեցան ներկայի Նախագահ Արութին Յարութիւնեան, նախկին նախագահ Յովիկ Զիրակեան եւ պատասխանատուներէն՝ Զարուհի Նաճարեան: Որպէս հիւր խօսնակներ ելոյթներ ունեցան Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան, (ելոյթը կուտանք ամբողջութեամբ) United Armenia Fund-ի նախագահ Յարութ Սասունեանը, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Աւ. Քհնյ. Վասիլեան, Լոս Անճելոսի քաղաքի Խորհուրդի նախագահ Պրն. Էրիք Կարսէթի, ինչպէս նաեւ ցեղասպանութեան կանխարգիլման Stand կազմակերպութեան ներկայացուցիչ Սարա Ուալիք:

## ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Երբ ինծի առաջարկուեցաւ 5 րոպէներու սահմանին մէջ ելոյթ ունենալ այս հաւաքին, մտածեցի թէ ի՞նչ պատգամ կրնամ փոխանցել ձեզի, մանաւանդ երիտասարդութեան: Պատգամ մը, որ թէ՛ օգտակար կրնայ ըլլալ ձեզի, ձեր անձնական կեանքերը յաջողութեամբ պսակելու եւ թէ՛ օգտակար կրնայ ըլլալ բոլորիս, մեր ազգի ու հայրենիքի բարելաւման: Ու հօրս օրինակը աչքիս առջեւ եկաւ:

Հայրս Եղեռնի վերապրող էր: 1915ին, երբ ինք 5 տարեկան էր, իր ծննդավայր Մալաթիայի մէջ Թուրքերը սպաննեցին իր հայրն ու մայրը: 5 տարեկանին որբացած հայրս, զրկուելով ծնողական հոգատարութենէ եւ դպրոց յաճախելու եւ ուսում առնելու բարիքներէն, կրնար շատ հեշտութեամբ սխալ ճամբաներէ ընթանալ եւ անիմաստ կեանք մը ունենալ: Բայց ընդհակառակը, անձնական ջանասիրութեամբ, ան կրցաւ արժեւորել, իմաստաւորել եւ յաջողութեամբ պսակել իր կեանքը այս աշխարհին վրայ: Ի՞նչ էր իր յաջողութեան գաղտնիքը: Դժբախտաբար իր կենդանութեան առիթը չէր ստեղծուած այս մասին իր հետ մանրամասն զրուցել: Բայց օրինակ առնելով իր ապրած կեանքէն ու լսելով իր պատմած փորձառութիւնները, կրցած եմ ի մի բերել եւ իմ կեանքի ուղեգիծ դարձնել իր պատգամները, որոնցմէ մի քանին կ՚ուզեմ բաժնել ձեզի հետ:

1. Պատանեկութեան տարիներուն ան ատելութեամբ լեցուած էր իր ծնողքը սպաննած Թուրքերուն դէմ եւ վրէժ լուծելու առիթներ կը փնտռէր: Բայց շատ չանցած գիտակցած էր որ ատելութիւնը քանդիչ է եւ որ ատելութեամբ լեցուած մարդը իր անձին մեծագոյն թշնամին է: Ատելութեամբ տեղ չես հասնիր, կ՚ըսէր ան: Փոխանակ թշնամիդ ատելու, փորձէ անկէ աւելի լաւը ըլլալ եւ այդպիսով վրէժդ լուծել:

2. Եթէ դուն ինքզինքիդ հոգ չի տանիս, մարդ քեզի համար հոգ չի ըներ, կ՚ըսէր ան: Ձախողութիւններդ ուրիշին մի՛ վերագրէր, այլ պատասխանատուութիւն վերցուր, ընդունէ եւ սրբագրէ: Յաջողութեան ճամբան այդ է: Միայն այդպիսով կրնաս թէ բարեկամներուդ եւ թէ թշնամիներուդ յարգանքին արժանանալ:

3. Կ՚ուրախանր երբ կը լսէր հայու մը յաջողութիւնը եւ կը նեղանար երբ մարդիկ կը նախանձէին եւ կամ կը բամբասէին յաջողած հայ մը: Արդէն թիւով քիչ ենք, կ՚ըսէր ան, փոխանակ իրարու ոտքին տակ օճառ քսելու եւ զիրար չէզոքացնելու, պէտք է իրարու թիկունք կանգնինք, որ բոլորիս վիճակը լաւանայ:

4. Խօսքդ եւ գործդ իրար պէտք է բռնեն, կ՚ըսէր հայրս, որպէս զի հանդիստ խղճով յառաջ երթաս: Երբ խօսքիդ եւ գործիդ միջեւ հակասութիւն կայ, կը կորսնցնես շուրջիններուդ վստա-

Շար.ը էջ 17

## ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՆԻՒ ԵՈՐՔԻ «ԹԱՅՄԶ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ




Կիրակի, Ապրիլ 26-ին հազարաւորներ հաւաքուեցան Նիւ Եորքի «Թայմզ» հրապարակին վրայ, ոգեկոչելու համար Հայոց Ցեղասպանութեան 94-րդ տարելիցը: Ինչպէս նախորդ տարիներուն հանդիսութիւնը կազմակերպուած էր Վարդանանց Ասպետներու եւ Ասպետուհիներու կողմէ, իսկ կը հովանաւորուէր ՀԲԸՄ-ի, Հայկական Համագումարի, Հայ Դատի Յանձնախումբի, ՌԱԿ-ի եւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան կողմէ:

Յաջորդական 24-րդ տարին ըլլալով միջոցառումին մասնակցեցան ու ելոյթներ ունեցան քաղաքական յայտնի դէմքեր, մտաւորականներ, հայկական դատի ջատագովներ եւ հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Այս տարի ելոյթ ունեցողներու շարքին էին, ԱՄՆ Ծերակոյտի ազդեցիկ անդամներէն Զարլզ Շումըր(Դեմոկրատ-Նիւ Եորք), գոնկրէսական Ֆրանք Փալոն (Դեմոկրատ-Նիւ Ճըրզի), գոնկրէսական Ուայնըր (Դեմոկրատ- Նիւ Եորք) եւ ուրիշներ:

Ելոյթ ունեցան նաեւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) Հիւսիս Արեւելեան Նահանգներու շրջանի ատենապետ Տիգրան Նալպանտեան իր ելոյթին մէջ ներկայացուց ՀԱԽ-ի տեսակէտները Նախագահ Օպամայի յայտարարութեան՝ Հայաստանի եւ Թուրքիոյ կառավարութիւններուն միջեւ տեղի ունեցող բանակցութիւններուն եւ Թուրքիոյ կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման դէմ տարուող աշխատանքներուն մասին:

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌՋԵՒ



Ապրիլեան նահատակներու նուիրուած Ս. պատարագ եւ հոգեհանգիստ տեղի ունեցաւ Ուրբաթ, 24 Ապրիլ, 2009, առաւօտեան ժամը 10:30ին, Մոնթեպելլոյի Մեծ Եղեռնի յուշարձանին առջեւ:

Օրուան պատարագիչն էր Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Մեր նահատակներու անմեռ յիշատակը ոգեշնչող հայրենաշունչ քարոզ մը տուաւ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Աւետարանի ընթերցումը կատարեց Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հոգշ. Տ. Անտոն Վրդ. Սարոյեան: Իսկ առաքելական Թուղթի ընթերցումով հանդէս եկաւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան հովիւ՝ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան:

*******

Կէսօրէ ետք, Յուշարձան այցելեցին Հայաստանի Համաժողովրդական Շարժման զօրակցող կազմակերպութիւնները:

Յուշարձանին ծաղկեպսակներ զետեղեցին Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան, Հայ Ամերիկեան Խորհուրդի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հայ Մարմնամարզական Միութեան, Կայծ Երիտասարդական Միութեան եւ Յանուն Ժողովրդավար Հայաստանի կազմակերպութեան ներկայացուցիչները:

## ԱՊՐԻԼ 24

# ԱՊՐԻԼ 24-Ը ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԷՋ



*Հոգեհանգիստ Սբ. Կարապետ եկեղեցւոյ կից Ազգային գերեզմանատան մէջ, խաչքարի շուրջ*

*Այս վերնագիրը Պարոյր Սեւակի խօսքն է՝ Եղեռնի նկարագրութեան մէջ: Ակամայ տարուայ չորս եղանակները պատկերեցին երեւակայութեանս մէջ: Համեմատելով մարդկային կեանքն ու տարուայ չորս եղանակները, որքան նմանութիւն կայ: Բնութեան եւ կեանքի էութիւնը գծագրւում են աչքերիս առջեւ: Ամէն ինչ գեղեցիկ է կեանքն ու գոյութիւնը, երկինքն ու գետինը մարդիկ եւ բնութիւնը, կենդանիներն ու բոյսերը: Այո, որքան գեղեցիկ եւ սրտայոյզ է, թռչունների ճռուողիւնը, մեղմ զեփիւռը, սիրահարների խինդեր ու ծիծաղը, ջրերի կարկաչը, եւ վերջապէս գարնան շունչը, իրապէս որքան քաղցր ու հաճելի է: Բայց դեռ տասը օր ունենք եւ դեռ ձմեռուայ մէջ ենք, ծաղիկների բողբոջներն ու մանր տերեւները պատրաստւում են ծլելու ու ծաղկելու՝ գարունը աւելի շքեղազարդ դարձնելու համար: Յիշեցի որ Կլէնտէյլում եմ ապրում, եւ չունենք չորս եղանակ:*

*Ցերեկը տաք ու գաղջ, գիշերները զով ու հանգստաւէր, որը ինձ յիշեցնում է Խուզեստանի կանաչապատ գարունը, հետաքրքիր է երբ ձայնասփիւռն ու հեռուստացոյցը հաղորդում են Ամերիկայի Հիւսիս-Արեւելքում, Եւրոպա, Հայաստան, Իրան եւ այլ երկրներում խստաշունչ ձմեռ է ձիւնածածկ գետին, անձրեւ ու հեղեղ...*

*Կարելի է ասել մարդկային կեանքն էլ չորս ժամանակաշրջան ունի, երիտասարդութիւնը գարուն է, հասուն տարիքը ամառն է, աշունը ամբարուած կեանքի բարիքներով եւ լի կենսափորձով, որոշ չափով կքուած այդ բեռան տակ եւ ձմեռը որ ցուրտն ու ծերութիւնն է հետը բերում, արդեօ՞ք իրար նման չեն: Մտորում եմ կեանքի սկիզբն ու ակունքը ի՞նչ է, հո՞ղը: Ոտք ենք դնում հողի վրայ, օգտւում ենք նրա պարգեւած բարիքներից, ինչ որ ցանկանում ենք, ստանում ենք նրա բերրի արգանդից եւ տիրանում: Ու անցկացնելով կեանքի չորս եղանակները՝ վերջում կամ ճամբուկէսին եւ կամ աւելի վաղ հանգիստ ենք առնում նրա ընդերքում, դառնում ենք հող, որ այդ բարիքներից գալիքները օգտուեն: Նորից ծլում, ծաղկում ու այս շրջանը անվերջ պտտւում եւ շարունակւում է: Մտածում եմ որքան բարիք կայ այս հողի մէջ եւ եթէ ես ժառանգաբար արարչապաշտ չլինէի անպայման հողապաշտ կը լինէի, հողը որ կենսատու է, հողը՝ որը կոչւում է հայրենիք:*

*Ընկղմել եմ խոր զգացումների մէջ եւ կարծես նիւթից չեղւում եմ: Բայց ոչ... գարնան մօտալուտ գալուստը զգում եմ իր բոլոր գեղեցկութեամբ ու բեղունութեամբ: Գարունը գալիս է, ուրիշ եղանակների հետ առայժմ գործ չունեմ, գարունն եմ ուզում, Ապրիլ ամիսը:*

*Ապրիլ ամիսն է, հայրենիքիս՝ Արեւմտեան Հայաստանի հողի վրայ եմ, մի գեղեցիկ գարուն, պայծառ արեւածագ, լազուր ու ջինջ երկինք, թարմ ու կանաչապատ բնութիւն, մեղմ զեփիւռ, գունագեղ հագուստներ հագած ժպտուն դէմքեր, բայց ոչ մի կանչ, ոչ մի հրահանգ գարնան դիմաւորելու համար: Գարուն է Ապրիլ ամիս, անցնում են օրերը, գարնան արեւը ծածկւում է թուխ ամպերով, ձախորդ ու սեւակնած օրեր են յաջորդում իրար, ագռաւներն ու գորտերն են սոխակների փոխարէն կռկռում, մարդիկ անհանգիստ են, ժխոր է տիրում, մահուան սարսափը Դամոկլեան սրի պէս կախուած է բոլորի գլխին: Դժխեմ իշխանաւորները ի՞նչ դաժան ծրագրեր են որոճում: Նոր իշխանաւորները նոր անուններով, իրենց տներում ապաւինած մարդկանցից, ի՞նչ են ուզում:*

*Գարուն է, Ապրիլի առաջին երեք շաբաթը վախ ու սարսափի մէջ անցաւ: Գարուն է սոսկումի գարուն, տխուր գարուն, ցաւոտ գարուն, մարդիկ տան անկիւններում ապաստանած, պատերի տակ ծուարած, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:*

*Ապրիլ է գարնան միւս ամիսների պէս, ոչ, ոչ, գարուն է մահաբեր, գարուն է արիւնահեղ, գլխատում են, անխնայ սպանում որովայն են պատռում, ցաւագար ճիչեր են լսւում, հարայ, աման ով մարդիկ, մարդկանց սպանում են, տները թալանում ու հրդեհում, ապա ճիչերը խլանում մահաբերլռութեան մէջ: Ի՞նչու, այս ինչ վայրագ յանցագործութիւն ու մարդասպանութիւն է, բաւական չի՞:*

*Գարուն է, արիւն է հոսում, գարուն վշտոտ գարուն...*

*Արդեօ՞ք Աստծու երկնքից կամ այս աշխարհի որեւէ ծէգից օգնութիւն կը հասնի, կարեկից ձեռք կերկարի, ոչ, ոչ, ոչ մի ձայն ոչ մի օգնող ձեռք, աշխարհը պապանձուել է: Ապրիլը վերջանում է կիզիչ*

*Շար.ը էջ 19*

# ԱՆԳԼԻԱՅԻ BBC-ԻՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
## (Մի հատուած Յուշերից)

Մոհամադ Ալի Ջամալզադէն պարսիկ գրականութեան նշանաւոր դէմքերէն է, որ 20րդ դարու սկիզբներուն ապրած եւ ստեղծագործած է Իրանի մէջ եւ յաճախ ճամբորդած է Եւրոպա:

Ան նաեւ գրած է իր Յուշերը, որոնց կարեւորը մէկ մասը կ'առնչուին 1915 թուի Հայոց Մեծ Եղեռնին: Ստորեւ կու տանք հատուած իր յուշերէն:

*ՄՈՀԱՄԱԴ ԱԼԻ ՋԱՄԱԼԶԱԴԷ*
*ՊԱՐՍԿԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ*
*ՀԱՐՄԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ*

*Մոհամադ Ալի Ջամալզադէն նկատւում է ժամանակակից պարսկական գրականութեան հայրը: Նա մեծ մասամբ ապրել է Պեռլինում եւ Հասան Թաղիզադէի ընկերակցութիւնում թղթակցել է յայտնի «Քաւէ» պարբերականին:*

*Ջամալզադէն 1915 թ. գալիս է Իրան եւ մօտ 16 ամիս մնալուց յետոյ վերադառնում է Գերմանիա: Այդ վերադարձին հանդիպում է հայ տեղահանուած քարաւաններին:*

*Նա Ապրիլ 1916ին Պաղտատից մեկնելով, նոյն տարուայ Մայիս 18ին հասնում է Պեռլին:*

*Ջամալզադէի ճամբորդութիւնը զուգադիպում է այն օրերին, երբ հայերը կոտորածի եւ ցեղասպանութեան էին ենթարկւում եւ ամէն տարի յիշում են այդ օրը, մի բան որ Թուրք կառավարութիւնը մերժում է ընդունել այդ հանգամանքը:*

*Միայն 2005 թ. Մարտ 3ին Թուրքիոյ վարչապետ Էրդողանը առաջարկեց որ պատմաբանները ուսումնասիրեն հայոց ցեղասպանութիւնը, որը հայերի կողմից մերժուեց:*

*Համաձայն Եւրոպական որոշ աղբիւրների, հայոց ցեղասպանութիւնը պիտի դասուի Թուրքիայի անդամակցութեան Եւրոպայում նախապայմաններում:*

*Որոշ երկրներ, օրինակ Քանատան, Ֆրանսան, Շուէյցարիան եւ այլն արդէն պաշտօնապէս ընդունել են հայոց ցեղասպանութիւնը:*

*Ստորեւ տալիս ենք Մոհամադ Ալի Ջամալզադէի յուշերից մի հատուած, որը տպուել է իր գրքում եւ կոչւում է «Ջամալզադէի յուշերը եւ գործունէութիւնը», տպուած Թեհրանում:*

*ՇԱՐԺՈՒՆ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՔԱՐԱՒԱՆԸ*

*Ճաշի մօտ էր երբ հասանք մի չորս հարիւր հայերի կիսամեռ խմբի, որոնց ժանդարմները չէին թոյլ տուել մի քիչ հանգստանալու: Կին եւ տղամարդ մի կտոր փալաս էին ճարել եւ թոկերով իրենց ոտքերին էին կապել որպէս կօշիկ որ մի կերպ դիմանան անապատի կիզիչ արեւին, ամէն մի ոտնաման նմանւում է մի օրօրոցի: Մարդ եւ կին կռացած փնտռում էին որ խոտ կամ արմատ ճարէի որ ուտէին:*

*Մի կին ինձ մօտեցաւ եւ իր երկու աղջիկներին 17 եւ 19 ամեայ ինձ ցոյց տալով բացատրեց որ նրանց մազերը տակից կտրել են որ ուշադրութիւն չգրաւեն (նա խօսում էր ֆրանսերէն), իր երկու աղջիկների ալմաստէ ականջօղերը ինձ առաջարկեց ի դիմաց մի փոքր հացի որ տայ իր աղջիկներին, որոնք գտնւում էին սովամահութեան եզրին: Ինձ պատեց ամօթ եւ խիղճ, որովհետեւ մենք ինքներս էլ ուտելիքի նեղութեան մէջ էինք: Ինչ որ կարողացայ իրեն բաժին տուի եւ ասեցի այդ ալմաստներն էլ քեզ մնայ:*

*Մի հասակաւոր մարդ մօտեցաւ մեզ, մաքուր եւ վարժ ֆրանսերէնով ասեց որ ինքը Իսթամպուլի համալսարանում մաթեմատիկայի պրոֆեսոր էր, իր 10 տարեկան տղան քաղցից մահամերձ է: Մենք իրեն ինչքան որ հնարաւոր էր ուտելիք տուեցինք: Նա ազահաբար կէսը կերաւ եւ միւս կէսը թաքցրեց իր շապկում, տեսնելով մեր հարցական հայեացքները՝ ասեց.*

*- Երեւի զարմանում էք թէ ինչու այս ուտելիքից իմ տղային բաժին չտուի, նա մահամերձ է կամ արդէն մահացած պիտի լինի, այնպէս որ ոչ մի տարբերութիւն չի անի: Դուք ինձ ասացէք, թէ այս անիծեալ պատերազմը ե՞րբ պիտի վերջանայ (առաջին համաշխարհային պատերազմը): Մենք ոչինչ չէինք կարող պատասխանել այդ հարցին:*

*Մենք հասանք մի գիւղակի, մեր պաշարը վերջացած լինելով, շատ դժուարութեամբ մի ոչխար գնեցինք եւ մորթեցինք, փորոտիքը հեռու նետեցինք: Անմիջապէս այդ խեղճ մարդիկ յարձակուեցին այդ զզուելի փորոտիքի վրայ եւ*

*Շար.ը էջ 19*



ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ
Ազգային, ժողովրդական, դասական երգերի անկուգական կատարող, հայրենի երգիչ
ՀԱՄԼԷԹ ԳԷՈՐԳԵԱՆԻ
և իր 8 հոգիէ բաղկացած նուագախմբի,
համերգները տեղի պիտի ունենան Կլէնտէյլում
Կիրակի, Յունիսի 7-ին և Շաբաթ Յունիսի 13-ին
Glendale High School-ի հանդիսասրահում,__ 1440 E. Broadway.
Տոմսերի և մանրամասնութիւնների համար հեռախօսել՝
Chaterian Video 818-242-6968 • Yerevan Printing 818-246-2070 • Kach Nazar 818-246-0125
Խումբը ելոյթներ է ունենալու նաեւ Ամերիկայի տարբեր հայաշատ քաղաքներում:

# ՀԲԸՄ-Ի ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՀԲԸՄ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ՕԳՏԱՇԱՏ ԾՐԱԳԻՐԻՆ՝ “THE JOB SHADOWING PROGRAM”

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովին զուգահեռ, Ասպետներու Համախմբումը կը կատարէ բացառիկ դրական աշխատանք հայ համայնքէն ներս: Արդարեւ, տարեկան իրենց կազմակերպած ազգային թեմաներով դասախօսութիւններուն, գրոյց-հանդիպումներուն, դրամահաւաք-ձեռնարկներուն կողքին, այս տարի, մտայղացութեամբը ատենապետ Պրն. Գուրգէն Պէրքսանլարի, եւ լրիւ աջակցութեամբն ու քաջալերանքովը ՀԲԸՄ-ի Քանոկա Փարքի Մանուկեան-Տեմիրճեան եւ Փասատինայի Երկրորդական Վարժարաններու տնօրէն Պրն. Յակոբ Յակոբեանի, ՀԲԸՄ-ի զոյգ երկրորդական վարժարաններու տասնմէկերորդ դասարաններու 26 աշակերտներ, կը մասնակցին ՀԲԸՄ Ասպետներու "The Job Shadowing Program"-ին: Այս ծրագիրին նպատակն է հայ աշակերտները ծանօթացնել տարբեր մասնագիտութիւններու, ուղղակի աշխատանքային օրուան մը գաղափարն ու առիթը տալով անոնց, արհեստավարժ մասնագէտի մը գործատեղիէն ներս: Թէ ինչպէ՞ս կ'ընթանան աշխատանքները, ի՞նչ դժուարութիւններ եւ մարտահրաւէրներ կը դիմագրաւեն անոնք իրենց մասնագիտական սովորական առօրեայէն ներս, ասոնց է որ կը ծանօթանան աշակերտ-աշակերտուհիները:

Եւ այսպէս, ՀԲԸՄ-ի Ասպետներու դիմումին ընդառաջելով, տասներկու կամաւոր արհեստավարժներ՝ բժիշկներ, ճարտարագէտներ, ազատ ձեռնարկատէրեր, առեւտրականներ, իրենց անձնական աշխատատեղին հրաւիրելով մէկական աշակերտ, օր մը ամբողջ անոնց հետ կ'ունենան փորձառութեան եւ գիտելիքի փոխանցման ժամեր, իսկ աշակերտը գաղափար ստանալուն կողքին, դէմ յանդիման կը գտնուի ասպարէզային իրականութեան մը հետ. բան մը, որ որքա՜ն օգտակար է եւ հաճելի: Ամենէն գլխաւորը այս ծրագիրին՝ առիթն է, որ կը տրուի աշակերտին, իսկ ծրագիրը՝ հարիւր առ հարիւր ուսուցողական է եւ արժանի բուռն ծափահարութիւններու:

Այստեղ, յարմար կը նկատենք յիշել անունները այն տասներկու կամաւոր ազգայիններուն, որոնք սիրայօժար կը տրամադրեն իրենց ժամանակն ու կարելիութիւնները, օգտակար հանդիսանալու մեր դպրոցականներուն: Թէ՛ Ասպետներու Վարչութիւնը, թէ՛ տնօրէնութիւնը, թէ՛ ծնողները եւ թէ աշակերտները կը միանան մեր համեստ շնորհակալական խօսքին, որ այս պարագային ուղղուած է հետեւեալ հայրենակիցներուն: Իսկապէս, անոնք կը կատարեն հաճելիին եւ օգտակարին զուգորդումով յառաջ եկած յաջող քայլ մը, որ վստահաբար օրինակելի պիտի ըլլայ յետագային այլ հայրենակիցներու համար: Ներկայիս իրենց աշխատանքային վայրերուն դռները լայն բացած են հետեւեալները. Պրն. Սթիվ Համբար՝ անշարժ գոյքի առուծախի ասպարէզ, Պրն. Տիրան Ճէրէճեան՝ դեղագործական ասպարէզ, Պրն. Պերճ Շահպազեան՝ դրամատնային ասպարէզ, Պրն. Արա Մալոյեան՝ ճարտարագիտական, Պեւըրլի Հիլզի քաղաքապետարան, Տիկ. Նայիրի Պալեան՝ կալուածային առուծախ, Տոքթ. Կապի Արսլանեան՝ ատամնաբուժական, Պրն. Արամ Ակինեան՝ հաշուապահական, Տոքթ. Յարութ Եաղսըզեան՝ հիւանդանոցային, Պրն. Գէորգ Գալէնտէրեան՝ հիւսուածեղէնի ներածում եւ առաքում, Պրն. Համբիկ Սինանեան՝ շինարարական եւ կալուածային առուծախ, Տոթք. Կիրակոս Մինասեան՝ մանկաբուժական եւ Պրն. Գուրգէն Պէրքսանլար՝ առեւտրական ասպարէզ:

Ահաւասիկ գնահատելի նմոյշ մը ելեկտրոնային նամակի միջոցով փոխանակուած գիրերէ: Անճելա Թասլաքեանը ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի 11-րդ դասարանի աշակերտուհի է: Ան տեղեկանալով այս ծրագիրին մասին, մեծ հետաքրքրութիւն ցոյց կու տայ: Ծնողքին ու դպրոցի տնօրէնութեան քաջալերանքն ալ ստանալով, ան ներկայ կը գտնուի եւ դարձեալ պիտի այցելէ Պրն. Արա Մալոյեանի աշխատանքային վայրը: Վերջինս Պեւըրլի Հիլզի քաղաքապետարանի փոխ-ճարտարագէտի պաշտօնը կը վարէ ներկայիս: Անճելան իր նամակին մէջ շնորհակալութիւն կը յայտնէ, որ Պրն. Մալոյեան իր թանկագին ժամանակը տրամադրեց եւ բազմազբաղ ժամանակացոյցէն լայն պահեր նուիրեց իրեն: »Շատ բան սորվեցայ ճարտարագիտութեան (engineering) մասին ընդհանրապէս: Մեծապէս կը գնահատեմ ինծի համար ձեր կատարած շրջայցը, որուն ընթացքին մանրամասն տեղեկութիւններ տուիք քաղաքին մասին«: Պրն. Մալոյեան, իր հերթին կը գրէ, թէ ինք եւս շնորհակալ է Անճելային նախաձեռնութենէն եւ իրեն համար հաճելի էր քննարկելու քաղաքապետարանի տեղական կառոյցը, կազմակերպուածութիւնը, տարբեր բաժանմունքները, թէ ինչպիսի ծառայութիւններ կան, եւայլն: «Մեր երկխօսութիւնը ճարտարագիտութեան եւ անոր ճիւղերուն մասին աւելի հետաքրքրական դարձան քու դիպուկ հարցումներովդ», կը շարունակէ Մալոյեան: Այստեղ, պարզապէս օրինակ մըն է մեր բերածը, ուր նաեւ կ'իմանանք Անճելային ծնողքին գոհունակութիւնն ու շնորհակալական խօսքերը վարժարանի տնօրէն Պրն. Յակոբ Յակոբեանին եւ Ասպետներու վարչութեան ատենապետ Պրն. Գուրգէն Պէրքսանլարին:

Անգամ մը եւս անվերապահօրէն կը գնահատենք այս ծրագիրը նախաձեռնողներն ու իրականացնողները, որովհետեւ անոնք գիտակից են իրենց առաքելութեան եւ այդ առաքելութիւնը սրտամօտ է Բարեգործականին: Բարոյական ներդրումը ազգային հասարակական գործին՝ իւրաքանչիւր գիտակից հայու պարտականութիւնն է:

Հ.Ա.Ս.

# ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 94-ԱՄԵԱԿԸ

Հաւատարիմ իր հիմնադիրներու բարի աւանդութեան Պէյլանի Հայրենակցական Միութեան վարչութիւնը՝ այս տարի եւս նշեց Մեծ Եղեռնի 94-րդ տարեդարձը: Այս առթիւ յատուկ հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ օրուան պատարագիչ, Արեւմտեան թեմի առաջնորդական ընդհանուր փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի: Այնուհետեւ եկեղեցւոյ կից սարհին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ եւ ապա պատշաճ յայտագիր: Օրուան գլխաւոր բանախօսն էր Տոքթ. Համբիկ Սարաֆեան: Ան հանգամանօրէն խօսեցաւ քաներորդ դարու առաջին ցեղասպանութեան եւ անոր հետ առնչուող հիմնախնդիրներու մասին:

# ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱԼԵՔՍ ԹԱՏԵՐԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Համագաղութային ձեռնարկներու շարքին Ապրիլ 24ի երեկոյեան, Կլենտէյլի Ալեքս Թատերասրահին մէջ, յիշատակի հանդիսութիւն մը տեղի ունեցաւ նուիրուած Մեծ Եղեռնի 94րդ տարեդարձին:

Կլենտէյլի քաղաքապետական Խորհուրդի նախաձեռնած սոյն միջոցառումին իր օժանդակութիւնը բերած էր նաեւ այս հայաշատ քաղաքի Միացեալ Մարմինը:

Օրուան հանդիսավարն էր Կլենտէյլ քաղաքի Քաղաքապետական Խորհուրդի անդամ Արա Նաճարեան, որուն բացման խօսքէն ետք բեմ հրաւիրուեցաւ ծանօթ հրապարակախօս եւ հեղինակ Մարք Արաքս: Ան իր ելոյթին մէջ անդրադառնալէ ետք օսմանեան Թուրքիոյ հեռանկարներու մասին, խիստ կարեւոր նկատեց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացի շարունակութիւնը, մինչեւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու հատուցումը:

Այնուհետեւ ելոյթներ ունեցան նաեւ Կելնտէյլի քաղաքապետ Ֆրէնք Քինթերօ, գոնկրեսական Էտըմ Շիֆ եւ Քալիֆորնիոյ Խորհրդարանի անդամ Փոլ Գրիգորեան: Բոլորն ալ իրենց զօրակցութիւնը յայտնեցին հայ ժողովուրդի անժամանցելի արդար դատին:

Հանդիսութեան գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Կլենտէյլի Հայ Սքուլի երգչախումբն ու Գոռ Մխիթարեան:




**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**

## Ի ՅԻՇԱՏԱԿ

# ՀԱՅԿԻ ԱՆՄՈՌԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Մասիս»ի Ապրիլ 18ի թիւով, գուժած էինք եղերական մահը Հ.Մ.Մ.ի մարզիկներէն՝ Հայկ Օհանեանի: Ստորեւ կու տանք իր կենսագրականը եւ իր մօր հրաժեշտի խօսքը:

### ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐԻ ՕՀԱՆԵԱՆ



*Հայկ Գրիգորի Օհանեանը ծնուել է 1989 թ. Ապրիլի 16ին, Երեւան քաղաքում: 1991 թ. Դեկտեմբերի 19ին ընտանիքով, մօր, հօր, մեծ պապի, տատիկի ու մօրաքոյրի հետ տեղափոխուել է Լոս Անճելոս մշտական բնակութեան:*

*Աշխոյժ երեխայ էր Հայկը, անչափ հետաքրքրասէր ու պրպտող: Սիրում էր խաղալ, թռչկոտել, անվերջ հարցեր էր տալիս, սիրում էր լողալ ու հեծանիւ քշել: Պարզ հայեացք ունէր Հայկը, ոսկէ գանգուր մազեր ու նմանը չունեցող ժպիտ... Ժպիտ, որը յետոյ ոչ միայն պիտի ջերմացնէր իր ընտանիքը, այլեւ իր բոլոր ճանաչողները ընկերներն ու բարեկամները:*

*Վալոդ պապը քանի որ տղայ զաւակ չունէր, յատուկ ուշադրութեամբ էր հետեւում փոքրիկ Հայկին: Տատը՝ Եղսիկը սիրում էր իր Հայկին եփում, կերակրում, լուանում եւ հագցնում: Թերեւս ոչ ոք աւելի ժամանակ չի անցկացրել Հայկի հետ, քան տատը եւ այդ էր պատճառը որ թոռնիկին մօր սիրով էր սիրում Եղսիկը եւ ոչ թէ տատի: Ու յետոյ, երբ Հայկը մեծացաւ յաճախ էր ասում, որ երեք մայր ունի ինքը՝ տատիկը, Մարինէն մօրաքոյրն ու մայրը: Թէկուզ եւ հօրական կողմի մեծ ծնողքը Ալբերտն ու Հռիփսիկը հեռու էին իրենից, բայց Հայկը գիտէր, որ նրանք էլ են իրեն շատ սիրում: Հոլիվուտում էր ապրում Հայկիկը, Ուինոնա փողոցի վրայ, այնտեղ անցաւ մանկութիւնը, խաղաց թաղի երեխաների հետ, յաճախեց Los Feliz Elementary դպրոցը, ապա միջին դասարաններում Ռոզ եւ Ալեք Փիլիպոս վարժարանը: Շատ ընկերներ ունէր Հայկը, սիրում էր շփուել, դուրս գալ, ճանաչել, Նորը միշտ ձգում է իրեն եւ այդ էր պատճառը, որ մօր թոյլտուութեամբ շարունակեց ուսումը Marshal High School-ում եւ աւելի ընդարձակեց արդէն բազում ընկերների շրջանակը: Հայկի համար սահմաններ գոյութիւն չունէին: Բարեկամանում էր բոլորի հետ մէկ վայրկեանում գերում դիմացինին ու վստահութիւն ներշնչում: Բարի էր Հայկը, պարզ ու անկեղծ ու այդ էր պատճառը, որ ընկերներն այդքան սիրում էին իրեն:*

*Դպրոցը աւարտեց 2007ին, յաճախում էր Փասատինայի, Կլենտէյլի եւ Լոս Անճելոսի Community Colleg-ները: Շատ նախասիրութիւններ ունէր, բայց վերջնականապէս չէր էլ որոշել ինչ մասնագիտութիւն պիտի ընտրի, մէկ հոգեբան էր ուզում դառնալ, մէկ ատամնաբուժ, մէկ փոթոժուռնալիստ ու մէկ էլ գրող: Յետոյ ուզում էր մարզիչ դառնալ, բուժաշխատող ու մէկ էլ խոհարար: Հայկը բազում երազանքներ ունէր, զարմանալի մեծահոգութիւն, խոր, անյատակ հոգեկան աշխարհ եւ կարճ շատ կարճ երկրային կեանք: Աւաղ, Հայկի կենսագրականը չի կարող երկար լինել, նա շատ երիտասարդ թողեց այս կեանքը, բայց իր ապրած կարճ 20 տարիներով նա շատ կարեւոր պատգամ թողեց մեզ, ապրողներիս: Հայկը հնարաւորութիւնը չունեցաւ հասուն տղամարդ դառնալ ու զաւակներ դաստիարակել: Իր խօսքի փորձի միջոցով մեզ իր պատգամը հաղորդեց: Հայկի պատգամը իր ապրած կեանքն է, եղէք բարի, կենսասէր, վայելէք կեանքը, սիրէք Աստծուն, մի չարացէք, ու ապրէք ձեր օրն այնպէս ձեր կեանքի վերջին օրը կ'ապրէիք:*

*Գնաս բարով Հայկ, քո երկնային ժպիտը մեզ պահապան:*

# ՄՕՐ ԱՆԱՒԱՐՏ ԶՐՈՅՑԸ ՀՐԱԺԵՇՏԻՑ ԱՌԱՋ

*Հայկ, տղաս, իմ միակ, իմ անգին զաւակ, դու իմ կեանքի խթանիչ ուժ, իմ նպատակ, իմ ուրախութիւն: Եթէ տրտնջացել եմ, բողոքել, միայն քո կարօտից, քանզի ներկայութիւնդ էի որոնում ամէն վայրկեան, եթէ քննադատել եմ, միայն քո սիրուց, քանզի անթերի էի ուզում քեզ տեսնել: Թէ տագնապում էր սիրտս, միայն քո կեանքի, քո ապահովութեան համար: Թէ մայր, թէ հայր էի քեզ համար, ու շատ անգամ շփոթում էի դերերը...*

*Հազա՛ր ներողութիւն...*

*Կատարուեց ամենասարսափելին, երբեւէ ծնողի համար ամենամղձաւանջայինը, վատթարագոյնը ոճիրներից: Անմեղ արիւն թափուեց Զատիկի օրը, իմ որդու անմեղ արիւնը...*

*Հայկ, յիշում ես որքան էինք խօսում կեանքի ու մահուան առեղծուածի մասին, իւրաքանչիւրիս առաքելութեան մասին այս կեանքում, թէ ինչո՛ւ ենք աշխարհ գալիս, ինչո՛ւ ենք մեռնում, թէ Աստուած ինչո՛ւ է ծնում մեզ որոշակի պայմաններում, տալիս վերուստ ընտրուած ծնողներ ու ընտանիք: Ու յիշո՞ւմ ես, մենք երկուսս էլ ինչքա՜ն ուրախ էինք, որ Աստուած հենց քեզ էր ընտրել ինձ որդի, ու ինձ քեզ մայր: Հաւատա, եթէ ի սկզբանէ իմանայի, որ ծայրագոյն ցաւը պիտի ունենայի քեզ որդի ունենալով, դարձեալ Աստծուն պիտի խնդրէի, որ քեզ որդի ունենալու գերագոյն երջանկութիւնը ինձ պարգեւի: Դու Արեւ էիր տղաս, քո ժպիտը Արեւ էր, քեզ հետ ապրած ամէն վայրկեանը ուրախութիւն էր ինձ համար: Աստծոյ նուէրն էիր դու, հողեղէն պարգեւ քեզ տեսնելու, գրկելու քեզ հետ ապրելու պայմանով... 20 տարուայ նուէր ու յաւերժական պարգեւ... քո մահից յետոյ... Ես գիտեմ որ դու կաս, որ դու ապրում ես, դու ամէնուր ես, ուրիշ ձեւի մէջ, ուրիշ հարթութեան վրայ: Հիմա արդէն գիտեմ, թէ ինչու էիր անվերջ շտապում, ինչու հոգիդ դադար չունէր, ինչու չէիր քնում գիշերները: Ժամանակը քիչ էր, անելիքները՝ շատ...*

*Դու պիտի հասցնէիր տեսնել հնարաւորին չափ շատ, հասկանալ, ընկալել կեանքը, ճանաչել գերագոյն ու միակ ճշմարտութիւնը: Չէ՞ որ դա է մեր ծնուելու նպատակը: Զատիկի վաղ առաւօտեան տակաւին արեւը չծագած, դու յաղթայարեցիր ամենադժուարը: Կեանքի ու մահուան այդ սահմանը անցնելով մէկ վայրկեանում քո փորձը հազարապատկուեց ու հիմա դու քո մօրից իմաստուն ես: Հիմա դու մեզնից իմաստուն ես: Փա՜ռք քեզ շատ, Տէր իմ Աստուած:*

*Ես գիտեմ, որ հանգիստ ես հիմա, լուսաւորուած ու քո ոչ հողեղէն, երկնային ժպիտով մեզ ես հսկում վերեւից:*

*Գնաս բարով, տղաս, քո հողեղէն մարմնին հանգստութիւն...*

*Իսկ հոգուդ՝ անմահութիւն...*

*Եւ երբ իմ կեանքի օրերը վերջանան ամենակարող Աստծու կամքով ու ինձ Տէրը արժանի համարի քեզ տեսնելու, գիտեմ, որ սպասելու ես ինձ կեանքի ու մահուան դարպասների մօտ դիմաւորելու անսահման կարօտով տոգորուած հոգուս:*

*Գնաս բարով իմ Արեւ, իմ կեանք, իմ թագ ու պարծանք: Գնաս բարով Հայկ...*

*Յաւերժ քո մայրդ՝ Գայանէ*

### ՄԱՔԱՌՈՒՄ
### ՆՇԱՆ ԵՂԵԱՆ

Վեց հարիւր տարի մեր կոռ ճակատին
Ինքնութեան դաժան կնիքն ն քկրել,
Վեց հարիւր տարի մեր սուրբ հաւատին
Բռնակալները փորձեն են տիրել:

Նրանք քանդեոլ են վանքերը մեր հին,
Ու մեր բերդերը ամպերում կորած,
Իմմ ժողովրդին գցել դռնէ դուռ
Լլկել, չարչարել ու թողել սոված:

Սակայն թալանի աւեր աւարում
Մի տեղ օճախի կրակն էր վառւում,
Մի տեղ սարսափի անապատի մէջ
Հայկեան մանուկը տառերն էր սերտում:

Այսպէս հալածուած հայ ժողովուրդը
Փիւնիկի միջից իր սուրն էր կռել
Վեց հարիւր տարուայ մեր սուրբ ոստանը
Բորենիներին բաժին էր ընկել:

Սարդարապատի ճակատամարտով
Հայ ժողովրդի ճակատը պարզուեց,
Հերոս Չէյթունցու հպարտ կեցուածքով
Արցախցին արեան վրէժը լուծեց:

Ով հայ ժողովուրդ, հզօր է կամքդ
Քո զաւակներով ամուր բռունցքուիր,
Ու աշխարհակալ պապերիդ նման
Քո երկրիդ պայծառ ապագան կերտիր:


**ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ**
**«ՆՈՐ ՕՐ» Շաբաթաթերթի**

**Սրտբաց զրոյց-հանդիպում**
**Սփիւռքահայ Մտաւորական**
**ՏՈՔԹ. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆԻ հետ**

**Մասնակցութեամբ՝**
**Զորf-Մարզպանի Հայրենակցական Միութեան,**
**Հայ Անթապցիներու Մշակութիայն Միութեան**
**եւ Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան**

**Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, Ապրիլ 30, 2009,**
**երեկոյեան ժամը 7:30ին, ԹՄՄ «Պէշկէօթիւրեան»**
**կեդրոնի հանդիսասրահին մէջ,**
**Ալթատինա, Փասատինա:**

**Ներկայս ընդունիլ որպէս անձնական հրաւէր:**



**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ**
**ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**

**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**
**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**
**GLOABCAST SATELLITE**
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

## ԳԱՂՈՒԹՆԵՐ

## ՆԵՈՕՍՄԱՆԻԶՄԻ ԴՈԿՏՐԻՆԻ ՅԻՒՍԻՍԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*կովկասեան վտարանդիների՝ Թուրքիայից Ռուսաստան ներթափանցելու բոլոր խողովակներն առայսօր կազմակերպւում եւ օգտագործւում են Թուրքական հետախուզութեան կողմից: Ներկայումս Թուրքական էմիսարները փորձում են Աբխազիայի ռազմական հրամանատարութեանն առաջարկել միջոցառումներ, որոնք նպատակ ունեն վերակողմնորոշել չճանաչուած հանրապետութեան զինուած ուժերը դէպի Թուրքիա:*

*Կան տուեալներ, որ Անքարան փորձում է երկարաժամկէտ կտրուածքով Աբխազիայում լուծել ռազմական կադրերի պատրաստման համար անհրաժեշտ, հրապարակե ունենալու խնդիրը, իսկ այդ կադրերը պէտք է պատրաստուեն հիւսիս-կովկասեան ժողովուրդների՝ ադղների, կաբարդինների, աբազինների ներկայացուցիչներից:*

*Ենթադրւում է, որ այս նախագիծը նպատակ ունի ուժեղացնելու Թուրքիայի ազդեցութիւնը Հիւսիսային Կովկասի արեւմտեան մասում, ինչպէս նաեւ վերահսկողութեան տակ ունենալ մարդկանց զգալի թուակազմով խմբաւորում, որն ընդունակ է մարտական եւ դիվերսիոն գործողութիւններ իրականացնելու: Եթէ յաջողուի կազմակերպել ծովային եւ օդային հաղորդակցութիւն Թուրքիայի ու Աբխազիայի միջեւ, ապա այս խնդիրը լիովին լուծելի է: Վերոնշեալ խնդիրներով էր հաւանաբար պայմանաւորուած նաեւ Թուրքիայի կողմից Սերգեյ Բաղապշին եւ նրա թիմին ցուցաբերուած աջակցութիւնն Աբխազիայի նախագահական ընտրութիւններում, երբ, ռուսամէտ «կուսակցութիւնից» բացի, Աբխազիայում երեւան եկաւ աւելի ազգայնական «կուսակցութիւն», որը, չընդգծելով դէպի Թուրքիա իր կողմնորոշումը, այնուհանդերձ, կապեր ունէր Անքարայի հետ:*

## ԱՊՐԻԼ 24-Ը ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 8-էն*

*րեց Տօքթ. Սաղրեանը իր խօսքը ըսելու: Շուրջ 45 վայրկեաններու ընթացքին, յարգելի բանախօսը հայերէն եւ անգլերէն լեզուներով անդրադարձաւ Ցեղասպանութեան հետ կապուած պատմաքաղաքական եւ մարդկային դէպքերուն, շեշտը դնելով Թուրքերու կողմէ Ցեղասպանութեան ճանաչումէն անդին, անոր հետ կապուած հայ ժողովրդի պահանջքներուն վերադարձ բռնագրաւուած հողերու, նիւթական հատուցում, Թուրքիոյ մէջ հայ եւ այլ փոքրամասնութեանց իրաւունք, եւայլն: Բանախօսութեան աւարտին, տեղի ունեցաւ հարց-պատասխանի աշխոյժ եւ հետաքրքրական պահ, որու ընթացքին, մանաւանդ երիտասարդներու կողմէ, հարցումներ եղան Թուրքիոյ վարած ուրացման քաղաքականութեան, միջազգային շրջանակներու գործին, եւայլն: Հարցումներուն տրուեցաւ կարելի եղածին չափ գոհացուցիչ պատասխաններ:*

*Ցայտագրի աւարտին, արտասանական եւ երգային բովանդակութեամբ ելոյթներ ունեցան Սօսի Գալթաքճեան եւ Ազատուհի Մութաֆեան: Ապա, Հայր Զաւէն անգամ մը եւս անդրադարձաւ Ցեղասպանութեան իմաստին, եւ «Պահպանիչ»ով փակեց երեկոն:*

*Ցայտագրի 3րդ բաժինով, տեղի ունեցաւ հոգեճաշ զոհուածներու յիշատակին:*

*Բոլորին վկայութեամբ, եզակի ձեռնարկ մըն էր Պաթոն Ռուժի մէջ Եղեռնի 94-ամեակի յիշատակութիւնը, որուն համար իրապէս շնորհաւորելի են շրջանի պատասխանատու շրջանակները, ի մասնաւորի Ս.Դ.Հ.Կ. «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղի ընկեր-ընկերուհիները, ղեկավարութեամբ ընկ. Վազգէն Գալթաքճեանի:*

## ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*հութիւնը եւ տեղ չես հասնիր, չես յառաջդիմեր:*

*5. Ազգասէր մարդը անձնասէր չի կրնար ըլլալ, կ՚ըսէր հայրս: Կեանքդ միայն քեզի համար պիտի չապրիս, այլ ընտանիքիդ ու ազգիդ համար ալ: Միայն այդպէս վարուելով կրնանք զօրացնել մեր ընտանիքները, մեր ազգը:*

*6. Գործի մը չի ձեռնարկած, մտածէ անոր հետեւանքներուն մասին, վաղուան օրուան մասին: Եթէ պատկերացումդ լաւն է, աւելի աշխուժութեամբ կը փարիս գործիդ եւ յաջողութիւնդ աւելի ապահովուած կ՚ըլլայ:*

*Երբ իմ սեփական տունը գնեցի, հայրս 80 տարիքը բոլորած էր: Զարմանքով եւ հիացումով կը դիտէր իրեն, թէ ինչպիսի՞ աշխուժութեամբ պարտէզին հող կը տանէր եւ պտղատու ծառեր կը տնկէր: Օր մը, երբ մեր պարտէզի աշխատանքէն դադար կ՚առնէինք, իրեն ըսի թէ անհամբեր եմ տեսնելու թէ ծառերը ե՞րբ պիտի մեծնան, պտուղ տան, որ մենք միասին մեր աշխատանքին պտուղները վայելենք: Հայրս կռահելով միտքս, ըսաւ, տղաս, թերեւս ես չտեսնեմ այդ օրը, բայց վստահ եղիր, որ այսօրուընէ իսկ իմ սիրտը ուրախ է այդ օրուան տեսիլքով:*

*Մենք ամէն տարի, Ապրիլ 24ի օրը կրնանք հաւաքուիլ այստեղ, Երեւանի մէջ, թէ աշխարհի տարբեր երկիրներուն մէջ ոգեկոչելու մեր նահատակներու յիշատակը: Եթէ մեր այս հաւաքները ձեւական բնոյթի պիտի ըլլան, ապա տեղ չենք հասնիր, արժանին մատուցած չենք ըլլար մեր նահատակներուն: Բայց երբ ամէն մէկս, մեր ամենօրեայ կեանքին մէջ, անձնասէր ըլլալէ աւելի ըլլանք ազգասէր, երբ մեր խօսքն ու գործը համապատասխանեցնենք իրարու, երբ փոխանակ իրարու նախանձելու, թիկունք կանգնինք իրարու, երբ մենք մեր փրկութեան ու յաջողութեան համար ապաւինինք մեր սեպհական, հաւաքական ուժին, երբ մենք ատելութիւնը մեր մէջէն դուրս վանելով, լեցուինք սիրով, ապա բոլորիս սրտերու ալ այսօր իսկ գոհունակութեամբ եւ ուրախութեամբ կը լեցուին, որ եթէ ոչ մեր կենդանութեան, ապա մեզ յաջորդող սերունդներուն օրով, անպայման իրականացուցած կ՚ըլլանք մեր նահատակներուն, մեր ֆիտայիներուն, մեր ժողովուրդի կիսատ մնացած, անկատար երազները: Ահա այդ գիտակցութեամբ միայն մենք մեզ կը բարձրացնենք եւ տեղ կը հասնինք, թէ անհատական եւ թէ հաւաքական մակարդակի վրայ:*







# ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՒ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

*Շարունակուած էջ 13-էն*

- Վեր. Յակոբ Գունտաքճեան - Հովիւ՝ Հասան Պէյլիի Հայ Աւետ. Եկեղեցիին:
- Վեր. Ստեփան Յովհաննէսեան - Հովիւ՝ Խառնէի Հայ Աւետ. Եկեղեցիին:
- Պատուելի Թադւոր Յակոբեան - Հովիւ՝ Պաղչէի Հայ Աւետ. Եկեղեցիին:
- Պատուելի Կարապետ Քիւփէլեան - Հովիւ՝ Օսմանիէի Հայ Աւետ. Եկեղեցիին

### ՍԱՅ ԿԷՋԻՏԻ ՄԷՋ

- Պատուելի Լեւոն Սողոմէեան - Հովիւ՝ Հաճընի Հայ Աւետ. Եկեղեցիին
- Պատուելի Ասատուր Թոփալեան - Հովիւ՝ Ֆէքէի Հայ Աւետ. Եկեղեցիին:
- Պատուելի Մելիտոն Մալեան - Հովիւ՝ Սիսի Հայ Աւետ. Եկեղեցիին:
- Պատուելի Արտաշէս Պոյաճեան - Հովիւ՝ Շարի (Կոմանա) Հայ Աւետ. Եկեղեցիին:
- Պատուելի Յակոբ Ալպարեան - Հովիւ՝ Կապանի Հայ Աւետ. Եկեղեցիին:
- Պատուելի Կոստանդին Սիւյահեան - Հովիւ՝ Կարս-Պազարի Հայ Աւետ. Եկեղեցիին:

### ՀԱՄԻՏԻԷԻ ՄԷՋ

Պատուելի Մարգար Գալուստեան - Հովիւ՝ Համիտէի Հայ Աւետ. Եկեղեցիին:

Պատուելի Յովակիմ Գայայեան - Հովիւ՝ Ալպուսթանի Հայ Աւետ. Եկեղեցիին:

Վերոյիշեալ Հայ Հոգեւոր Հովիւներէն անկախ՝ նահատակուեցան ամերիկացի երկու միսիոնարներ - Վեր. Դանիէլ Ռաճըրզ՝ Ատանայի շրջանի Ամերիկայի Աւետարանչական կազմին ներկայացուցիչը, եւ Վեր. Հէնրի Մաուըրըր՝ Հաճընի շրջանի միսիոնարը:

Ասոնցմէ զատ նահատակուեցան 13 աշխարհական պատուելիրակներ՝ 9 այր եւ 4 կին, որոնց անունները չեն յիշատակուած:

Կասկած չկայ որ Կիլիկիոյ Հայ Աւետարանական Միութիւնը մեծ հարուած մը կրեց Ատանայի այս ահաւոր կոտորածին պատճառաւ՝ որուն ընթացքին բնաջնջուեցաւ իր ղեկավարներուն կէսէն աւելին...: Հրաշքով ազատեցաւ Վեր. Համբարձում Աշճեան (1863-1938)՝ Ատանա քաղաքամասի Հայ Աւետ. Եկեղեցիին Հոգեւոր Հովիւը: Աստուած պահած էր զայն որպէսզի յետագայ ամիսներուն ճակատագրական դեր խաղար հայ ազգային կեանքին մէջ: Թէեւ ան թիրախ դարձաւ յարձակումի, սակայն, մազապուրծ ազատեցաւ ստոյգ մահէ: Իբրեւ հեռատես, խոհեմ, եւ հասուն եկեղեցական ու ազգային ղեկավար ան խիստ յատկանշական դեր մը խաղաց ջարդին ընթացքին, ու անկէ ետք: Կոտորածին ընթացքին, ու ապա յաջորդող ժամանակշրջանին մեծ եղաւ Վեր. Աշճեանի խիզախ ու դրական ներդրումը, բանակցութիւններու ընթացքին: Հազիւ սկսած էր կոտորածը երբ ան իր շուրջը հաւաքեց Ատանայի հոգեւոր պետերը խորհրդակցութեան համար: Պէտք է յիշել որ այն օրերուն Ատանայի առաջնորդ Սրբազանը Եգիպտոս կը գտնուէր՝ որով. Վեր. Աշճեան քաջութիւնը ունեցաւ առաջնորդի դեր ստանձնելու:

Վերոյիշեալ ժողովին ծնունդը առաւ Հոգեւոր Պետերու Մարմին մը որուն ատենադպիրի պաշտօնը վստահուեցաւ Վեր. Աշճեանին: Քանի մը օտար լեզուներու քաջածանօթ, ու գոլէճական եւ աստուածաբանական բարձրագոյն հաստատութիւններէ շրջանաւարտ, ան վարպետ դիւանագէտի մը հանգոյն կատարեց թղթակցութիւնները Թուրք եւ օտարազգի քաղաքական եւ ուրիշ մարմիններու, ինչպէս նաեւ զանազան հաստատութիւններու հետ: Որպէս գլխաւոր խօսնակը Հոգեւոր Պետերու Մարմինին, ան ճարտարօրէն վարեց բանակցութիւնները առնչակից բոլոր պաշտօնատարներու հետ: Վեր. Աշճեան կարեւոր եւ դրական դեր մը ունեցաւ հայ երեք համայնքներու միասնական եւ միաճակատ դիրքաւորման մէջ, ինչ որ հիացուց օտար դեսպանատուները եւ դիւանագիտական գործակալները: Նոյնիսկ Թուրք պետական անձնաւորութիւններ խորապէս տպաւորուեցան անոնց ցուցաբերած քաղաքական ու համայնքային համերաշխ գործելակերպէն: Կրնանք ըսել որ երեք համայնքներու միակամ գործունէութիւնը «ծունկի բերաւ» Ատանայի նոր կուսակալը, որ կոտորածէն տասը ամիս ետք հաշտութեան շքեղ ճաշկերոյթ մը սարքեց որուն ներկայ եղան Թուրք եւ օտար դիւանագէտներ: Այս մէկը տեղի ունեցաւ 5 Փետրուարի, 1910ին, որուն ներկայ եղան աւելի քան չորս հարիւր հոգիներ:

Ահա այս ճաշկերոյթին ընթացքին էր որ երեւան եկաւ Վեր. Աշճեանի քաղաքական հասունութիւնը եւ իբրեւ հայ՝ իր աներկբայ ազգասիրութիւնն ու խիզախութիւնը: Թուրք քաղաքապետին եւ կուսակալին ճառերէն ետք ան իբրեւ Հոգեւոր Պետերու Մարմինին խօսնակը ոտքի ելաւ, ու ի միջի այլոց ըսաւ. «Ձեր ազնիւ ներողամտութիւնը խնդրելով, կ'ուզեմ հետեւեալ խնդրանքը ներկայացնել: Նախ կը խնդրեմ կառավարութենէն որ չդատապարտէ ամբողջ ազգը (հայութեան դէմ) գործուած ոճիրին համար: Զայն գործադրող սակաւաթիւ մարդիկն են միայն մեղաւորները: Երկրորդ, պիտի խնդրէի մեր իսլամ հայրենակիցներէն որ իրենց շահը չփնտռեն ուրիշներու կորուստին մէջ: Ատանայի այս աղէտին պատճառաւ մենք՝ քրիստոնեաներս՝ մեծ կորուստի ենթարկուեցանք: Արդեօք մեր իսլամ հայրենակիցները այս դժբախտ պատահարին իբրեւ արդիւնք վսեմացա՞ն թէ՝ նուաստացան: Երրորդ, մենք անկեղծօրէն կը սիրենք այս երկիրը, բայց նաեւ ի սէր Աստուծոյ՝ արդարութիւն կը պահանջենք...: Եթէ կը սիրէք ձեր հայրենիքը, եթէ կը սիրէք ձեր կառավարութիւնը, եթէ կը սիրէք ձեր Աստուածը, վերջ տուէք այլեւս այսպիսի վարմունքի, եւ թող (բոլորս)՝ իսլամ եւ ո՛չ-իսլամ հայրենակիցներ միաբանութեամբ եւ համերաշխութեամբ ապրինք, ու պատճառ չըլլանք այս հայրենիքին տկարացման... մէկ նպատակով ու մէկ սրտով ամրացնենք այս նուիրական հայրենիքը, ու փառաւորենք զայն, որովհետեւ միաբանութիւնով հաստատ կը մնանք, իսկ բաժանումով՝ կ'իյնանք»: (Վեր. Հ. Աշճեան, «Ատանայի Եղեռնը», Նիւ Եորք, 1950, Հատընտիր հատուածներ, էջ 108-112):

Հայ երեք համայնքներու գործակցութիւնը եւ անոնց ներկայացուցիչը եղող Հոգեւոր Պետերու Մարմինը շարունակեց իր համերաշխ աշխատանքը ջարդերէ ետք ալ: Առաջնորդներու այս խումբը ներկայացուց հետեւեալ պահանջները.

ա. Յանցաւորներուն պատժուիլը: բ. Նիւթական վնասուց հատուցում: գ. Կառավարութենէն պահանջել պաշտօնական յայտարարութիւն մը որ հաստատէր հայերու անմեղութիւնը Ատանայի կոտորածին գործընթացքին մէջ, ըլլալով լոկ անմեղ զոհերը այդ կոտորածին:

Հոգեւոր Պետերը հեռագիրով Սուլթանին հաղորդեցին իրենց այս պահանջները: Այս հեռագիրէն օրինակներ յղուեցան նաեւ Մեծ Եպարքոսութեան, Երեսփոխանական Ժողովին, եւ քրիստոնեայ ուրիշ ազգերու պատրիարքներուն: Այս պահանջներուն իբր հետեւանք՝ Թուրք հազարաւոր խռովարարներէն եւ ոճրագործներէն միայն 50 հոգիներ պատիժի ենթարկուեցան: Գալով նիւթական հատուցումի, կառավարութիւնը երկու տարբեր առիթներով 350,000 Օսմ. Ոսկի վճարեց: Միւս կողմէ, Մեծ Եպարքոս Հիւսէյն Փաշա պաշտօնապէս յայտարարեց թէ՝ հայերը անմեղ էին Ատանայի դէպքին առընթեր: Դժբախտաբար, Երիտասարդ Թուրքերը չընդունեցին իրենց դերակատարութիւնը Ատանայի կոտորածին մէջ:

Հոս կ'արժէ գնահատանքով անդրադառնալ Հոգեւոր Պետերու միջեւ տիրող ջերմ գործակցութեան եւ համերաշխութեան, ու ասիկա՝ կոտորածի նախօրեակին, կոտորածի ընթացքին, ու նաեւ կոտորածէն ետք: Շնորհաւորելի է որ համազգային այս աղէտը իրարու մօտ բերաւ Առաքելական, Կաթողիկէ, եւ Աւետարանական յարանուանութիւնները: Վերցուեցան վերապահութիւնները, իրերամերժ ու խտրական հոգին: Փլեցան բաժանման պատերը, ու սերտ կապեր հաստատուեցան հայ երեք յարանուանութիւններու միջեւ: Տանք օրինակ մը: Կոտորածի առաջին օրերուն, հրոյ ճարակ դարձած էր Ատանայի Հայ Աւետարական Եկեղեցիի շէնքը: Բայց պատահեցաւ հրաշք մը. տեղւոյն Հայ Առաքելական Եկեղեցին սիրայօժար տրամադրեց իր սեփական եկեղեցաշէնքը հայ աւետարականններուն՝ որպէսզի հոն կատարէին իրենց ընթացիկ պաշտամունքները: Քրիստոնէական ազնիւ ժեստ մըն էր այս մէկը որ տակաւին իրարու մօտեցուց նոյն ցեղին պատկանող երկու քրիստոնեայ եկեղեցիները, եւ դուռ բացաւ փոխադարձ սիրոյ եւ գործակցութեան: Կ. Պոլսի հրաժարեալ պատրիարք՝ Եղիշէ Արք. Դուրեանի, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Սահակ Խապայեանի հաստատած սերտ կապը Վեր. Աշճեանի հետ սրտառուչ գրաւական մը հանդիսացաւ միջ-համայնքային գործակցութեան:

***

Ապրիլ, 1909 - Ապրիլ 2009...: Անցան հարիւր երկար տարիներ: Սակայն մենք կա՛նք, ու կը մնա՛նք իբրեւ համայնք ու ազգութիւն: Ազատագրուած ենք զոհեալի հոգեբանութենէն, ու վերածնած՝ իբրեւ պահանջատէր: Վերանորոգուած ենք ու կենսունակ, ու պատրաստ ենք մարտահրաւէներ դիմագրաւելու: Այսուհանդերձ, եւ յատկապէս հարիւրամեակի առիթով՝ մտաբերենք քաղաքական ու դիւանագիտական խաղերը որոնք խաղցուեցան մեր վրայ այդ ճակատագրական օրերուն: Զըլլանք միամիտ, հապա սորվինք ըլլալ իրատես, հեռատես, ու շրջահայեաց, որպէսզի պատրանաթափ չըլլանք: Օտարներուն օգնութեան դիմելով, եւ ստանալով հանդերձ, մեր փրկութիւնը չսպասենք անոնցմէ: Վերջին հաշուով՝ մեր սեփական միջոցներով կրնանք տիրանալ մեր իրաւունքներուն, պայմանով որ համերաշխութիւն եւ համագործակցութիւն ցուցաբերենք ներազգային տարածքով: Բաւարար չեն տարին մէկ անգամ, եւ կամ՝ ազգային տօներու եւ ոգեկոչումներու առիթով համերաշխութիւն ու միասնականութիւն քարոզել: Այս առաքինութիւնները ուսուցուելու են մեր նորահաս սերունդին, որպէսզի անոնք ընդունին զիրար իբրեւ նոյն ազգին զաւակները, եւ իրենց մատղաշ տարիքին լծուին Հայ Դատին արդար լուծումին:

Արդ, ոգեկոչենք Ատանայի կոտորածին Հարիւրամեակը, ու յարգանքով խոնարհինք մեր Նահատակներուն յիշատակին առջեւ: Վստահինք Աստուծոյ, ու ամբողջական իրաւ յանձնառութիւնով արժեւորենք մեր ներկան, ու անյողդողդ հաւատքով քալենք դէպի լուսաւոր ապագան:

*******

**Օգտագործուած Աղբիւրներ**

1. Խրլոբեան, Վեր. Տիգրան Ոսկեմատեան Պէյրութ, 1950, Հատոր Բ. էջ 124-125
2. Աշճեան, Վեր. Համբարձում, Յ., Ատանայի Եղեռնը, ու Գոնիայէ Յուշեր, Նիւ Եորք, Տպ. Կոչնակ, 1950:
3. Քասունի, Վեր. Եղիա, Ս. Լուսաշաւիղ, Պէյրութ, Ամերիկեան Տպարան, 1947, էջ 263-269:
4. Ատանալեան, Վեր. Կ. Պ. Յուշարձան, Ֆրէզնօ, 1952, էջ 330, 339:
5. Գալուստեան, Գրիգոր, Յ., Մարաշ կամ՝ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Տպ. Կոչնակ, Նիւ Եորք, 1934, էջ՝ 929:
6. Հայաստանի Կոչնակ, Տպ. Կոչնակ, Նիւ Եորք, 1938, էջ 81-82:
7. Զազմաճեան, Վեր. Դոկտ. Յակոբ, Հայ Աւետարանական Շարժումը, Ֆրէզնօ, 1985, էջ 81-82:
8. Աշճեան, Վեր. Համբարձում, Յ. Յիշատակարան՝ 70-ամեակի տօնակատարութեան, Լոս Անճելըս, 1936, էջ 17-53:
9. Տարագճեան, Վեր. Պարգեւ, Ն., «Վեր. Համբարձում Աշճեան» Ջանասէր, թիւ Յուլիս-Օգոստոս, էջ 254, 259, եւ Սեպտ.-Դեկտ. էջ 365-376, 1974:

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Ընկ. Վազգէն Գալթաքճեան գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը $500 տոլար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին, մաղթելով նորանոր վերելքներ:

**www.massisweekly.com**
**Updated every Friday**

## ՄԱՀԱԶԴ



*ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆ*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, քրոջ եւ հարազատին՝ ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Ապրիլ 23-ին, 2009 յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, Ապրիլ 30ին, կէսօրուան ժամը 12:00ին, Հոլիվուտի Forest Lawn Cemetery, 6300 Forest Lawn Drive, Hollywood Hills, Old North Church եկեղեցւոյ մէջ:*

*Սգակիրներ՝*

*Դուստրը՝ Ծերոն եւ Թամար-Շողեր Աբելեան եւ իրենց զաւակները Շանթ եւ Րաֆֆի*

*Մանչը՝ Վիգէն եւ Սիրվարդ Մուրատեան եւ իրենց զաւակները՝ Նաթալի եւ Ալէք*

*Եղբայրը՝ Դոկտ. Օննիկ Քէշիշեան եւ իրենց զաւակները*

*Եղբայրը՝ Փրոֆ. Օշին Քէշիշեան եւ դուստրը՝ Մայքը եւ Քնար Սոլաքեան եւ իրենց զաւակները*

*Ինչպէս նաեւ Քէշիշեան, Աբելեան, Տէմիրճեան, Ռուբինեան, Սոլաքեան ընտանիքները եւ համայն ազգականները:*

*Հոգեհաց պիտի մատակարարուի Palladio Hall, 1018 E. Colorado St., Glendale, CA 91205*

*Փոխան ծաղիկի ընտանիքը փափաքով նուիրատուութիւններ կատարել «Լարք» երաժշտական ընկերակցութեան, Հայաստանի Մանկատների Հիմնադրամին եւ ՀՕՄի Որբերու ֆոնտին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»ի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ մասնաւորաբար մեր պաշտօնակից՝ Օշին Քէշիշեանին, Տէր եւ Տիկ. Օննիկ Քէշիշեանին, «Լարք» Երաժշտական Ընկերակցութեան եւ համայն պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կը վշտակցի վաստակաշատ արուեստագիտուհիի, մանկավարժի, երաժշտական քրոնիկագրի զաւակներուն, եղբայրներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Սիրուած արուեստագիտուհին կեանքին հրաժեշտ տուաւ, կրթամշակութային բեղուն վաստակ մը ձգելով իր ետին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՍԵԴՐԱԿ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ Միութեան «Հայրէն» երգչախումբի նախկին խմբավարի, արուեստագէտի, Հայաստանի արուեստի վաստակաւոր գործիչի եւ բազմաթիւ մրցանակներու դափնեկիրի այրիին՝ Լուսինէ Գալստեանին, դուստրերուն՝ Մարինէ եւ Գեղամ Պօղոսեանին, Հռիփսիմէ Տէր-Ղազարեանին եւ համայն ընտանեկան պարագաներուն:*



# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**
**Address: ----------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: ------------**
**Tel :------------------------ Fax : -------------------------**


## «ԳԱՐՈՒՆ Ա, ՁԻՒՆ Ա ԱՐԵԼ...»

*Շարունակուած էջ 14-էն*

*արեւի տակ կարաւանների շարանները սեւացրել են դաշտ ու անապատ: Այս ծովածաւալ կարաւանը, այս անապաստան մարդկանց ո՞ւր են տանում, ո՞ւր են քշում: Վա՜յ ընկում են, դժուարութեամբ բարձրանում եւ երբեմն էլ չէ, ոտքի չեն կանգնում, փռուած են գետնին եւ ինչքան շատ են ընկածները:*

*Գարուն է դարդ ու ցաւ է երկնքից թափւում, գարուն է արիւն է հոսում: Մարդասպաններ, հերիք է, կանգ առէք: Բնազդաբար գոռում եմ գարուն է ձիւն է արել: Այս ի՞նչ գարուն է խինդ ու ծիծաղ չկայ, ա՜խ ու վա՜խ կայ, լացու կոծ է, տխուր գարուն, վշտոտ գարուն, մահաբեր գարուն, 1915 թիւ Ապրիլ 24, հայ ազատատենչ ժողովրդի ցեղասպանութեան 94 տարի առաջ «Աստուածապաշտ» գազանները մարդասպան եղան եւ «Աստուածապաշտ» վկաները տեսան, լսեցին ծպտուն չհանեցին, չօգնեցին, չփրկեցին, անգամ չմխիթարեցին:*

*Գարուն է 24 Ապրիլ մահ է բուրում: 24 Ապրիլ 1915ը հայ ազգի համար ցուրտ ձմեռ եղաւ, ցաւ ու դարդ եղաւ: Եւ այս ցաւը ամբողջ աշխարհում, մեզ այսքան տարի հանգիստ չի տալիս: Դեռ այսքանը բաւ չէր 2007ի Յունուար 19ին 21րդ դարում, թափուած արեան պահանջատիրութեան եւ ազատութեան սիմւոլ Հրանդ Տինքը զոհուեց մի ազգայնամոլ տմարդի ձեռքով: Ինչո՞ւ, ո՞վքեր էին այդ մարդասպանի հովանաւորները, պարզ է անցեալի յանցագործների ժառանգները, դիմակաւոր յանցագործներ: Ի դիմաց, նոր ամօթ ու ատելութիւն շահեցին մի նոր Ապրիլ 24 ստեղծելով:*

*Բայց Թուրք ժողովրդի առաջադէմ եւ ազատատենչ զանգուածները այս յանցագործութիւնները հաստատող չեն, Տինքի պատգամը ընդմիշտ կը մնայ նրանց մտքում: «Ժողովուրդները հաւասար են» այդ պատճառով ազատութեան ճանապարհին հայազգի զոհուածի յուղարկաւորութեանը վառ մոմերը ձեռքերին կոչ էին անում «Մենք բոլորս Տինք ենք, մենք բոլորս հայ ենք»:*

*Եւ հիմա մարդասպաններ եւ գազանաբարոյ դեւեր որ չէք կարողանում տանտիրոջը իր տնում տեսնել, գիտցէք որ յանցագործութեան ժամանակը անցել է եւ ժամանակի սլաքը ետ չի պտտուի, գիտցէք 21րդ դարում Ապրիլները պայծառ գարուն է լինելու, ծաղկավառ գարուններ, երջանիկ եւ ուրախ գարուններ, այլեւս գարնանը ձիւն չի անելու: Եւ հայրենիքիս բաժան-բաժան մասնիկները դէպի հայրենի հող են ուղղուելու:*

*Սուրբ ու հսկայ Արարատը նրանց պաշտպան ու պահապանն է լինելու եւ նրա գագաթից երիտասարդ Տինքերը գոչելու են, էլ տմարդ յանցագործներ էլ կը բաւէ:*

## ԱՆԳԼԻԱՅԻ BBC-ԻՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*ձեռքից ձեռք խլելով ուտում էին, մենք չէին իմանում՝ խղճանք թէ զարմանանք այդ վիճակից:*

*Մարդ արարածը որ իրեն համարում է ստեղծագործութեան կատարեալը, ինչպէ՞ս է իր նմանին հասցնում մի վիճակի որ ոչխարի փորոտիքը ուտելու համար իրար հետ կռւում են:*

*Այս սոսկալի վիճակը բոլորիս վրայ ազդեց եւ գոնէ ինձ վրայ այնքան, որ ստամոքսի հիւանդութիւն ստացայ եւ օրական քանի անգամ պարտաւոր էին բնական կարիքի համար մեր կառքից (ֆուրգոն) հեռանալ ապաւինել մի որեւիցէ բլուրի յետեւ: Մեր որոշումն այն էր որ երբ մեզնից մէկը հեռանայ, պիտի սպասենք մինչեւ նա վերադառնայ:*

*Մի օր, երեկոյեան ես զգացի բնական կարիք եւ գնացի մի բլուրի յետեւ, նստած ժամանակ աչքիս ընկաւ մի մարդկային կտրուած գլուխ, դեռեւս մեծ մասամբ կաշի եւ մազ կար, մազերի գոյնից պարզ երեւաց որ հայի գլուխ էր:*

*Այդ տեսարանը ինձ վրայ շատ վատ ազդեց եւ շտապեցի դէպի մեր կառքը, բայց այն տեղում չէր, մեկնել էր, բայց բարեբախտաբար աւազի վրայ անիւի հետքերը երեւում էին, դեռ լրիւ չէր մթնել:*

*Այդ անիւի հետքերով ես քայլեցի մինչեւ հասայ մեր կառքին, նրանք կանգ էին առել հանգստանալու: Ի պատասխան իմ բողոքի եւ հարցուփորձի, նրանք ասացին՝ այն հաջին որ մեր մէջ էր գտնւում, մեզ հաւատացրել է որ ես մեռել եմ եւ սպասելն անօգուտ է:*

*Իրեն երկար պախարակելուց յետոյ, որովհետեւ մօտեցել էինք Հալէպ քաղաքին, մենք բոլորս միաձայն ասացինք որ հաջու հետ այլեւս չենք ուզում ճամբորդել եւ իր ապրանքները վար նետեցինք:*

*Անսպասելիօրէն, իր ապրանքների միջից մի մեծ քսակ բրինձ դուրս թափուեց, այդ անխիղճ մարդը մեր ճամբորդութեան ուտելիքի պակասը տեսնելով հանդերձ, գլացել էր մեզ բաժին հանելուց:*

*Պեռլինում այդ հաջին նորից երեւաց եւ ամէն կերպ ուզեց մեզ մօտենալ բայց անօգուտ:*

*Յետոյ իմացնք որ գերմանական ոստիկանութիւնը նրան ձերբակալել է, որովհետեւ նա թշնամու համար լրտեսութեամբ էր զբաղուած: Նրան արտաքսեցին Թուրքիա: Լսեցինք գնդակահարել են:*

*Շուէյցարական կառավարութիւնը Կարմիր Խաչի միջոցով մի որոշ թւով հայ որբ մանուկներին բերեց Շուէյցարիա, նրանք լաւ կրթութիւն ստանալով, այսօր Ժնեւում դարձել են երեխաների հաւանդութեան մասնագէտ բժիշկ, ճարտարագէտ եւ ճարտարապետ: Սրանք նոյն խեղճ մանուկներն են, որոնք առիթ ունենալով այսօր հասել են բարձր դիրքերի:*



**INVITATION FOR BID (IFB# 7785) DENTAL INSURANCE SERVICE PROVIDER**

**The Housing Authority of the City of Los Angeles invites bids from qualified insurance carriers, brokers and agents to provide Dental Insurance Coverage to its employees. Copy of the IFB may be obtained beginning April 14, 2009 via www.HACLA.org/ps or by calling (213) 252-5405 or 252-1832. Bids will be accepted until 1:30 P.M., by May 29, 2009.**

**4/23, 4/30/09**
**CNS-1567554#**
**MASSIS WEEKLY**

# ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ ԵՆ

# ՍՓԻՒՌՔԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԱՆՀԵՏԱՑՈՒՄԻ Կ'ԱՌԱՋՆՈՐԴՈՒԻՆ ԵՐԲ ԴՊՐՈՑՆԵՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՆԱՆ

Հայ լեզուն մշակոյթը եւ պատմութիւնը անհետացումի անմիջական վտանգի ներքեւ կը գտնուին երբ միջոցներ ձեռք չեն առնուիր ապահովելու վերապրումը եւ զարգացումը Սփիւռքի հայ համայնքներուն՝ աշխարհի տարածքին։

**Հայաստանի երիտասարդ Հանրապետութիւնը պէտք ունի զօրաւոր Սփիւռքի մը, առանց որուն ան չի կրնար գոյատեւել։**

Միակ միջոցը ներկայ եւ ապագայ հայ սերունդներուն ազգային ինքնութիւնը պահելու՝ գոյութիւնն է դպրոցներու ուր հայ աշակերտներ ու տղաք գիտակցին իրենց մարդկային իրաւունքներուն ու դաստիարակուին՝ ապահովելու համար գոյերթը եւ զարգացումը իրենց համայնքներուն։

Այս տեսակ կրթարան մըն է Կիպրոսի Մելգոնեան Հաստատութիւնը, որ անարդարօրէն փակուեցաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) Կեդրոնական Վարչութեան կողմէ: Եւրոպայի, Միջին Արեւելքի եւ աշխարհի զանազան վայրերու ներկայ եւ ապագայ հայ սերունդները զրկուեցան իրենց սեփական լեզուով իրենց ժառանգութիւնը ճանչնալու մարդկային արդար իրաւունքէն։

**Միացէք Համաշխարհային այս Ստորագրահաւաքին՝ դիմելու Կիպրոսի Հանրապետութեան Կառավարութեան՝ որ համոզէ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, որպէսզի այս վերջինը հաւանի պատմական Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու նոր տեսիլքով մը՝ գալիք սերունդներուն համար, իր ներկայ վայրին, Նիկոսիոյ մէջ։**

## ՍՏՈՐԱԳՐԱՀԱՒԱՔ՝ ՎԵՐԱԲԱՆԱԼՈՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ, ԿԻՊՐՈՍ

Մենք ստորագրահաւաքի մասնակիցներս կ'առարկենք Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումին, եւ կը փափաքինք զայն տեսնել վերաբացուած իր ներկայ տարածքին վրայ, իբրեւ ուսման երկրորդական մակարդակով կրթարան մը՝ ծառայելու Եւրոպական Միութեան եւ շրջակայ վայրերու բոլոր հայերուն։

Մենք կը գիտակցինք այն կենսական դերին որ ունեցած է Հաստատութիւնը անցնող 80 տարիներուն՝ պահպանելով ու զարգացնելով հայ լեզուն, մշակոյթը եւ պատմութիւնը եւ պաշտպանելով հայ ինքնութիւնը ամենուրէք։

Իբրեւ միակ հաստատութիւնը իր տեսակին մէջ, որ հայ ուսանողները կ'ապահովէ իրենց ուրոյն ժառանգութեան վրայ խարսխուած կրթութեամբ մը եւ օրէնքով պաշտպանուած սեփական լեզուով, մենք կը խնդրենք որ միջոցներ ձեռք առնուին ապահովելու անոր պահպանումը։ Կը խնդրենք որ Հաստատութեան հիմնադիր ու բարերար Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեանի փափաքները յարգուին։ Մենք կը խնդրենք որ այս տարածքը մնայ պատմա-մշակութային Ազգային Ժառանգութեան վայր՝ ինչպէս յայտարարուած է Կիպրոսի Հանրապետութեան անձեռնմխելիութեան հրամանագրով։

Կը խնդրենք որ պաշտպանէք աշխարհասփիւռ հայերու մշակոյթն ու ինքնութիւնը՝ երաշխաւորելով որ վերաբացուի կրթութեան այս մեծ կեդրոնը եւ առիթը տրուի որ ան ծաղկի եւ բարգաւաճի եւ իր դերով բարգաւաճին հայորդիներու ապագայ սերունդները ամենուրէք։



- Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը հիմնուեցաւ 1926ին առաջնական Կիպրոսի մէջ իբրեւ որբանոց՝ տուն մը հայթայթելով Ցեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներուն։ Այս գիտակցութեամբ, պատմական շէնքերը անձեռնմխելի յայտարարուած են Կիպրոսի Հանրապետութեան կողմէ՝ իբրեւ Կղզիին ազգային ժառանգութեան մէկ մասը։
- Որբերու կողմէ տնկուած ծառերը կը ներկայացնեն սփիւռքի բարգաւաճող հայկական համայնքները։ Այս պատճառով է որ Կիպրոսի Հանրապետութիւնը՝ Հաստատութիւնը կը նկատէ «պաշտպանեալ» պատմական վայր՝ իբրեւ խորհրդանիշ վերապրումի եւ յոյսի։
- Հազարաւոր հայեր որոնք անցան Մելգոնեանէն ուշագրաւ դերեր զբաղեցին իրենց համայնքներէն ներս, դառնալով առաջնորդներ իրենց ասպարէզներուն մէջ եւ սատարելով հայ մշակոյթին, կրթութեան, լեզուին ու ազգային ինքնութեան զարգացման։
- Մելգոնեանէն շրջանաւարտներ իրենց դրոշմը ձգեցին ամենուրէք՝ ըլլալով առաջնորդող դէմքեր գրականութեան, արուեստներու, գիտութեան եւ առեւտրական ասպարէզներու մէջ։
- Մելգոնեան Հաստատութիւնը հասցուցած է հազարաւոր ուսանողներ եւ ուսուցիչներ որոնք իբրեւ Բարեկամեցողութեան 'Դեսպաններ' Կիպրոսի ժողովուրդին արդար պայքարը կը պաշտպանեն, որպէսզի իրաւացի լուծում մը գտնէ Կղզիին Հարցը։

## ՄԻԱՑԷՔ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՒԱՔԻՆ՝

ՓՐԿԵԼՈՒ, ՎԵՐԱԲԱՆԱԼՈՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

ՍՏՈՐԱԳՐԱՀԱՒԱՔԻՆ ԿԱՅՔԷՋԸ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՍՑԷԻՆ՝ **www.midk.org/am**